

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99.092 Part A  
4P-28



71432

NOV 2011

-592-


591.99.092 բանձնի

Ա-28

• Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԶԱԼԱԼԵԴՐՈՒՄԻ ԾԱԳՈՒՄԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ

1932

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընկ. Ս. Մանուկյանի ներկա աշխատության նպատակն եղարդել Բաֆֆու «Զալալեղդինի» աղբյուրները։ Ներածականի մեջ ուսումնասիրողը բնութաղը և Գերմանիայի սոցիալ-տնտեսական գրությունը Շիլլերի ժամանակ և հայ իրականության վիճակը Բաֆֆու որոք, ցույց տալու համար սոցիալական այն արմատը, վորից ծնունդ ե առել Շիլլերի «Ավագակների» հերոսը և նրա հայկական վարչականուը՝ Սարհատը։

Վերջինս նույն կարլ Մոռըն է, վորը գործում և հայկական աղայմաններում — այս և հեղինակի յեղակացությունը։

«Ավագակների» ազդեցությունը «Զալալեղդինի» մեջ — այդ ակներեւ և գաղափարական ալաղակի — աիրող բանությունների դեմ խլսող իդեալիստի պատկերացումը «Զալալեղդինի» մեջ դրականապես Շիլլերի վողբերդության ազդեցության տակ և կատարվել — այդ ձիւտ է։

Սակայն ընկ. Ս. Մանուկյանն այդ ազդեցության սոցիալական հիմքի վրա կանգ և առնում ընդհանուր կերպով։ Վերջինս միայն մատնանշված և, բայց չի քննված, վերլուծված։ Վերլուծման առարկան դարձել և «Ավագակների» և «Զալալեղդինի» գրական ձեւվորման նմանությունների վերհանում։ Այս մոմենտը — վոր և ներկա աշխատության վիխավոր առանցքն է կազմում — ընկ. Մանուկյանը վերցնում է սոսկ վորպես ձեական առում։ Հեղինակն այդպիսով ընկնում է Փոքրալիզմի մեջ, և սրանով պետք և բացատրել նաև այն, վոր հեղինակը տարվելով նմանություններով, անշան ուշագրություն և դարձնում «Զալալեղդինի» և «Ավագակների» տարբերության վրա։

Այնուամենայնիվ այս դիրքը Բաֆֆու ուսումնասիրության համար վորո՞չ դեր է խաղում։

Գ. Վ.

Պետրատի տպարան  
Գլավիս 7567 (բ)  
Պատվեր 2274  
Հրատ. 2288  
Տիրաժ 3000



124

38

մայում ե առանց ընդդիմության կատարել իշխանի բոլոր ցան-  
կությունները։ Կամ թե՝ իշխաններն ու տերերն աղաս են որենքին  
հնագանդելուց։ որենքը միայն հպատակների համար ե։

Իշխողների այս գաղափարախոսությունը մշակվում եր ինչ-  
պես կրոնի ու գիտության, նույնպես և գրականության ու ար-  
վեստների մեջ, և վոր ուշադրավն ե, նույնիսկ բյուրկերական խա-  
վի մտավորականների կողմից։

Իրերի այս վիճակը շարունակվում է մինչև XVIII դարի կե-  
սերը։

Առաջին մտավորականը, վոր այս կրավորական վիճակից  
դուրս յեկալ և դերմանական բյուրկերի համար գաղափարախո-  
սական-աղաստագրական պայքարի ազդանշանը տվեց, դա լես-  
սինկն եր։ Նա իր քննադատական գրվածքներում պայքար սկսեց  
ընդդեմ պալատական ճաշակի և ըմբռնումների։ Բյուրկերին գի-  
տակակցության բերելու համար՝ նրա կյանքը ներկայացրեց բեմի  
վրա։ Պայքարի ասպարեզ մտավ Փեղալիքմի զլիավոր  
նեցուկ կրոնի դեմ։ իսկ վոր գլխավորն ե, «Եմիլիա Կալուստի»  
գրամայում բոլոր կիսատ միջոցները մեկ կողմ նետեց, սուր ի  
ձեռին մարտի գուրս յեկավ բոնակալ իշխանների, նրանց հոմա-  
նիների ու արբանյակների ցոփության ու սահմարձակության դեմ։  
Յերկրի ներքին սոցիալական կյանքն իր չարիքներով պատկերաց-  
նելու և նրա գեմ բողոքելու համար՝ առաջին ազդանշանը տվեց  
Լեսսինկը։ հաջորդ սերունդը խրախուսվեց գեղի դործ։ Ահա, դեռ  
նրա կենուանության ժամանակ այսպես կոչված՝ «Գյոտտինկինի  
Պուրակ» բանաստեղծական միությունն իր քննադատական յերդե-  
րում հնչեցնում ե այդ բողոքի ձայնը, վորին անմիջապես միաց-  
նում են և իրենցըՇտոր սու Դիրցի բանաստեղծները։ Լեսսիը  
գրում ե «Տնային ուսուցիչը», «Զինվորները», Շուրաբթը՝ «Իշ-  
խանական դամբարան»։ Գյոթեն՝ «Գյոց Փոն Բերլիխինկեն», «Պո-  
մեթեռու»։ Վակները՝ «Մանկասպան կինը»։ Քլինկերը՝ «Ֆառւո-  
տը», ինչպես և նկարիչ Մյուլերն՝ իր «Ֆառւոտը» և այլն և  
այլն։

Գերմանական բյուրկերի այս մտավորական սերունդը հան-  
դես յեկավ վորոց ծրագրով, —պատերազմ հայտարարել բոնակալ  
Փեղալիների դեմ, միլիտարիզմի դեմ, ճնշող ազնվականության և  
հողերականության դեմ։ արթնցնել, վորի հանել նիրհող բյուր-  
կերին ու գյուղացուն, պաշտպանել նրանց շահերը, կենսունակու-  
թյունն ու ձեռներեցությունը։

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա ուսումնասիրության նպատակն ե՝ ցույց տալ Շիլերի  
«Ավաղակներ»-ի դրական անմիջական ազդեցությունը Բաֆֆիի  
«Զալալեղիին»-ի վրա։

Սակայն պետք ե կանխել. —վոչ թե Բաֆֆիի քմահաճույքը և  
կամ պատահականությունը, այլ Հայաստանում ստեղծված կյան-  
քի ուրույն պայմանները միայն կարող ենին Կարլ Մոորին Հա-  
յաստան հրապուրել և նորանոր գործունեցության խրախույս ներ-  
շնչել։ Հետեւաբար, յերկու յերկերի հարաբերության պատճառա-  
բանման համար, անհրաժեշտ ե քննության առնել նրանց ծագման  
սոցիալական պայմանները։ Այս պայմանների նույնությամբ և  
տարբերությամբ ե, վոր պիտի բացատրի Կարլի և Սարհատի  
դորժունեցության և նմանությունը, և տարբերությունը։

Վեստֆալյան խաղաղությունը Գերմանիային պարզեց բազ-  
մաթիվ մանր ու խոշոր պետություններ։ Նրանց անջտուեց մի-  
մանցից մաքսային ցանցերով, արգելեց ներքին շուկայի աղատու-  
թյունը և մեծագույն հարվածը հասցրեց յերկրի տնտեսական  
կյանքի զարգացման։

Իշխանի կամ թագավորի իրավասությունը դարձավ բացար-  
ձակ. ժողովրդի վոչ միայն ստացվածքի տերն եր նա, այլև կյան-  
քի ու պատվի, մինչ այն աստիճան, վոր ծախում եր իր հպատակ  
յերիտասարդ կյանքերն ոտար պետություններին, և այդ յեկա-  
մուտով, իբր ևսի ԽIV-ի մրցակից, լցնում եր իր պալատը մա-  
տամ Բոմբատուրներով։

Հրամայող դասակարգը, իշխող գիրքերի տերը, թագավորի  
գործակիցն ու շահակիցը՝ ազնվականությունն եր։

Յերկրի տնտեսական կյանքի հետամնացության պատճառով  
բուրժուազիայի գիտակցությունը կրավորական վիճակումն եր,  
բյուրկերն ու գյուղացինն մնացին թագավորի ու ազնվականության  
քմահաճույքի առարկան, իրավագուրի զոհ։ Կրոնն ու գիտու-  
թյունն իրերի այս կացության տալիս եյին գաղափարախոսական  
հիմնավորում, հայտարարելով՝ թե քրիստոնեական կրոնը հրա-

Բայց այս հեղինակներից և վոչ մեկի գրվածքում այնքան հետեւղական բողոք, այնքան հեղափոխական բացարձակ ծառացում չկա, վորքան յերիտասարդ՝ Շիլլերի «Ավաղակներ», «Ֆիեսկո», «Սեր և խարդավանք» էրամաներում։ Այս յերեսույթի կարևոր պատճառներից պետք ե համարել և՛ այն, վոր այն ժամանակվագերմանական հանցագործ ֆեոլաներից ամենալաւը Կարլ Յելգենն եր, այն իշխանը, վորի անմիջական հսկողության տակ ապրելու, նրա կառուցած գիշերութիվ զպլոցում սովորելու տառապարտված եր՝ Շիլլերը՝ իր մանուկ հասակից սկսած։

Հաղիվ թե գտնի մարդկային մի հանցանք, վորով այս իշխանն արատավորված չլիներ, —ընտանիքներից կին, աղջիկ հափշտակելը, իր հապատակների վրա ապօռինի հարկեր նշանակելը, նրանց ստար պետություններին իբրև թնդանոթի միս վաճառելը, այլոց ստացվածքը բոնությամբ յուրացնելը, Շիլերի բարեկամ բանաստեղծ Շուրարթին խարելությամբ իր մոտ հրավիրել և տասը տարի շարունակ բանտում պահելը — այս բոլորը նրա սովորական վոճիրների համար որինակներ են միայն։ Շիլերը տեսնում էր իր շուրջը կատարվածը, նրա սիրան զգում եր ահավոր անիբրավությունը։ Դպրոցի պարխապներից ներս ելին թափանցում Sturm und Drang-ի գաղափարները և համակում նրա եյությունը։ Ահա այս հանգամանքների մեջ նա գրեց «Ավաղակներ»-ը, ստեղծեց իր Կարլ Մոորին, նրա մեջ զրեց իր զարու բուրժուական գաղափարախոսական կրակը, նրա ձեռին տվեց այդ բուրժուակայի կուած սուրը և ուզարկեց նրա թշնամիների «Ուրբառո» «բոնակալների գեմ»։ Հարուստ կարգածատերերի, պարոնների, կոմսերի և վուկեամուկ վոււ կենդանիների դեմ»։

Իսկ Հայաստանն ինչ սոցիալական պայմաններ եր առաջար-  
կում կարլի գործունելության համար :—

19-րդ դարու ստացին քառորդից սկսած Ռուսաստանի գեղի  
Կովկաս ծավալումը հաջողության ճանապարհներ եր հարթում  
հայ բուրժուազիայի համար, վորն ասափճանաբար կազմակերպ-  
վելով՝ յերկրի արգյունաբերության գլխավոր ազդակը հանդիսա-  
ցավ։ Նրա տնտեսական այս կացությունը զարգացրեց մի ամբող-  
ջական գաղափարախոսական սիստեմ՝ յելակետ ունենալով ազ-  
գային հարցն ընդհանրապես, և Տաճկաստանի արևելյան հայա-  
բնակ նահանգների գրավումը՝ մասնավորապես։ Հայ բուրժուա-  
զիան յերազում եր հայկական յերկու հատվածների ձուլում, մի

\*) *Би* В. М фриче.-Очерки по истории Западно-европейской лит.  
(*№ 89—97*): *Издат.* франц меринг-мировая лит. и пролетариат (*№ 49—55*)

զորեղ ազգային ամբողջություն, սեփական ընդարձակ շուկա, այսպէս կոչված՝ «աղջային շուկա», վորոն աղասի լինի միաժամանակ ոտար մրցակցությունից : Արտաքին զանազան հանգամանքների խրախուսում ելին հայ բուրժուազիայի այս տնտեսական դասակարգային խղեալները, առաջին խրախույսը տալիս եր ոռւսական տիրապետական հավակնությունը նույն արևելյան նահանգների նկատմամբ, և նրա, ըստ յերեսույթին, «բարյացակամ վերաբերմունքը» դեպի այդ խղեալները : Տաճկաստանի արևելյան հայաբնակ նահանգները հայ բուրժուազիայի հավակնությունները հրահրով տարբերով հարուստ եր :—Թեոդալական այլանդակություններով խնդողված մի յերկրամաս, ուր սանձարձակորեն իշխում եր փաշան, բեկը, կրօնավորը, կաշառակեր պաշտոնյան, չորթող վաճառականը . իբ հերթին վոճիրներ եր գործում կրոնը հարստահարիչների գլխավոր նեցուկը . նա մոլեռանդության մահարեր թյունն եր պատվաստում հարստահարվածների մեջ զեպի այլակրօնը . մահմեղական և քրիստոնյա ձնչվածներն անգիտակ իրենց ընդհանուր վիճակին՝ արյունաբրու թշնամիներ ելին, միմյանց բղկող : Յեկ սա մի վիճակ եր, վոր գարավոր անցյալուներ :

Հայ բուրդուազիկն գիտում եր այս բոլորը, սակայն իր գա-  
սակարգային շահերի համապատասխան գունավորված ակնոցնե-  
րով. Նա տեսնում էր իրը հարստահարող՝ թուրքը, քյուրդը, մահ-  
մեղականն առհասարակ, և իրը հարստահարյալ հայը միայն, և  
իր քաղաքական յեղակացությունները կառուցում եր ահա այս  
պատրանքի վրա :

Մինչ իրերն այս վիճակի մեջ ելին մինչև անցյալ դարու 70-ական թվականները, ահա ծագում և ոռւստաձկական պատերազմը : Ճակատագրական ժամը հասած է Համարվում . յերազները պետք է իրականացնել, ամեն գնով, կանոք չառնելով և՛ զոհաբերության առջև : Այս խրատը գալիս եր և՛ հնից, Արովյանից, Նազ զարյանից : Այսպիսի հորդոր եր կարգում այժմ նրանց գաղափարների ժամանագործը, հայ բուրժուազիայի պաշտոնաթերթ՝ «Մշակ» լրագիրը : Այս՝ պետք է զոհաբերություն, արյուն, պետք եւ ապստամբություն : Այս միտքն եր քարոզում Արծրունին հապարակախոսությամբ, Պատկանյանը՝ յերդերով, այս նույն միտքն եւ, վոր պատկերացնում եւ Բաֆֆին՝ իր «Զալալեզգին»-ով :

Բայց ի՞նչ հանդամանքներում պատկերացնել ապստամբությունը և ի՞նչպես ապստամբներին։ Ահա այս մտորումների մէջ

ե, վոր թափփիկ հայացքը հանգչում է Պոհեմյան անտառների համբավավոր «Ամաղակի», փորձված «Հեղափոխականի» վրա: Կարլ Մոռը համարվում է համապատասխան անձը հայ բուրժուազիայի իդեալների իրականացման համար, և նա հրավիրվում է Հայաստան՝ գործելու:

Բայց Կարլ Մոռն այժմ պիտ գործե մի յերկրում, ուր թե պետև սոցիալական պայմաններն ընդհանուր առմամբ նման են գերմանականին, այնուամենայնիվ կան և պայմաններ, վորոնք մասնավոր են, զուտ տեղական բնույթ են կրում:—Այստեղ հարստահրիչները «հարուստ կալվածատերելը», «պարոնները», «կոմսերը» և «վոսկեճամուկ փուճ կենդանիներն եյին», իսկ այստեղ իրր արդարին մատնանշվում են քյուրդ զանազան ցեղերն ու ցեղագետները: Այստեղ նրա կովին այսպիսով տեղի պիտի ունենար դասակարգային հողի վրա, իսկ այստեղ՝ ազգայնական հողի վրա: Նրա կովի այս բնույթից ե առաջանում ահա գործողության այն մասնավոր տարրերությունը, վոր մենք պիտ տեսնենք «Ապազակներ»-ի և «Զալալեղդին»-ի միջև, կովի այս բնույթի հետեւանքով ե, վոր համեմատաբար լայն, համամարդկային հորիզոններ յերազող Կարլի մտքի սահմանները նեղանում են և նա դաշնում ե հայ բուրժուազիայի գաղափարախոսությունը հետապնդող ազգայնական Սարհատը:

Ա.

«Զալալեղդին»-ի Ա. գլուխը նկարագրում է համանուն հերոսի բանակատեղին՝ արշավանքից անմիջապես առաջ: Բ. և Գ. գլուխներում, Խոշարա ձորի յելքին, հայտնվում է մի յերիտասարդ, վորը վերադառնում է Վանից և վորը զարմանում է՝ տեսնելով քրոքերի գործած ավերեների հետքերը հայ գյուղերի վրա: Նա շարունակում է իր ճանապարհը նույնիսկ գիշերը: Մթության մեջ լսում ե սարսափի և հուսահատության արտահայտություններ հայ բարբառով. տեսնում ե վիրավոր ամուսինների—Այրը գրկել ե նորածին զավակին, հետեւում է կինը, վորի ձեռքից բըռնած՝ քայլում ե մի փոքրիկ աղջիկ: Յերիտասարդն անկարեկից ե այս բոլորին, նա անընդհատ դիմում ե դեպի առաջ:

Ո՞վ ե այս խորհրդավոր անցորդը:

Մեր աճող հետաքրքրության վերջապես գոհացում ե տրվուժ նույն Գ. գլուխի վերջին մասում, այսպես. «Հանգամանքները ձգել ելին նրան մի այնպիսի վիճակի մեջ, վոր ինքը հակամայից դարձել եր դայլ, գայլի բոլոր անդիթությամբ: Մանկական հասակում ընտանիքը հալածեց նրան, նա արտաքսվեցավ հայրենական տնից, վորպես անառակ վորդի, իր համազգի հասարակության մեջ նույնպես նա ընդունելություն չդտավ, ամեն մարդ սկսեց խորշել նրանից՝ վորպես ժանտախտից: Այսուհետեւ մնում եր նրան անձնատուր լինել զեպքերի բերմունքին, և նա դարձավ մի արկածախնդիր թափառական, իսկ վերջը՝ մի անդութ ավաղակ, վոր ուխտել եր պատժել մարդկանց, վորովհետեւ մարդիկ պատժեցին նրան»:

Զարմանքը պաշարում է մեղ—արդյո՞ք մի ծանոթ կենսագրություն չեր մեր կարդացածը. ո՞վ ե իսկապես այս յերիտասարդը: Յել ահա, նման վորոնումների պահուն՝ հանկարծ մեր յերեսակայության մեջ պայծառանում է Կարլ Մոռի պատկերը: Վորքան նման են այս յերկուսն իրարու: Կարլն ե, նախ՝ իբր անառակ վորդի՝ հալածվում հայրենական տնից և իբր վնասակար տարր արտաքսվում հասարակության միջավայրից: Ապա ակա-

նատես ենք լինում, թե ինչպես դեպքերի այս ըերձունքը նրան դարձնում է թափառական, ի վերջո՝ ավազակ, վոր պատճում և մարդկանց, վրեժ լուծելով իր դեմ գործված անարդարության: Արդարե, վիճակների վորպիսի՛ նմանություն, պատահական նմանություն, անշուշտ, մտածում ենք:

Բայց հնարավո՞ր և յերկու ճակատագիրների այս աստվածանի նմանության պատահականությունը: Այնուամենայնիվ նման հանուպատրաստի յեղբակացությունից լիովին զոհացում չենք գտնում, և մեր լարված հետաքրքրությունը դիմում է նոր վորոնումների:

Յերիտասարդի կենսազբական այդ հատվածն ուրվագիծն է կարլ Մոորի ամրող կյանքի, ներկայացված «Ավազակներ»-ի մեջ: Բայց չկա՞ այստեղ այդ կյանքի մասին վկայություններ, վորոնք իրենց արտահայտությամբ ես հիշյալ ընդհանուր նմանության բնույթը ճշող ապացույց հանդիսանան: Յեվ ահա մեր ուշադրությունը կենտրոնանում է Կարլի գործունեյության այն ծրագրի վրա, վոր գծում և հերոսն ինքը՝ ավազակյին խմբի հրամանատարությունն ստանձնելու առթիվ: «Ո՞վ ներշնչեց քեզ այդ միտքը, լսիր, աղա, այս՝ յեկեք ավազակ դառնանք... ավազակ և մարդասպան... Հոգիս գործի ծարավի յէ, չունչս ազատության, մարդասպան, ավազակ... Մարդիկ թաքցրին ինձնից մարդկությունը, յես մարդկության եյլի հրավեր կարդում, ուրեմն հեռի ինձնից կարեկցություն և մարդկային դիմություն: Այսուհետեւ վոչ հայր ունիմ և վոչ սեր, արյունն ու մահը թող մոռացնել տան ինձ ամեն բան»: Վերջապես չի կարող ուշադրությունից վրիպիլ, վոր Կարլն իր ավազակային կյանքի մեջ անդամ միշտ տանձգում է իր այդ հալածական կյանքի վշտով: «Համայն աշխարհ մի ընտանիք, յես միայն մերժված, յես միայն աքսորված եմ արդարների գասակարգից... յես միայն վորդի կոչվելու անարժան... հավիտյան զորկ մտերիմ բարեկամի համբույրից... Ավազակներով պաշտպանակ, իժերով շրջապատված...»:

Պարզ է, մենք նկատում ենք ընտանիքից և հասարակությունից հալածական, ավազակության դիրկը նետվող յերկու ճակատագիրների վոչ միայն ընդհանուր զերքի կատարյալ նույնություն, այլև այդ ճակատագիրների պատկերացման ձևերի բացահայտություն:

Բայց գետ խուսափինք, վորեե հաղճեալ յեղակացությունից և շարունակենք կարգալ յերիտասարդի կենսազբականը: «Վորես ավազակ, նա քարձյալ մնաց միշտ աղնիվ: Նա չկորցրեց իր առյուծի վեհությունը, վոր չի սիրում հարձակվիլ տկար կամ վատուժ կենդանիների վրա, վոր իր վորսածի մեծ մասը թողնում է մանր գաղաններին ուտելու համար...»: Բայց մենք կարդում ենք զարձյալ Կարլի կենսազբությունը: Աչս՝ թե ի՞նչ է պատմում նրա մասին Ռացմանը. «Առանց կատակի... նա սպանում է, բայց վոչ թե մեղ նման կողոպտելու նողատակով, արծաթը բնավ դին չունի նրա աչքերին, թեև կարող ե տոպղակներով հավաքիլ,

Այսեղ Կարլը չի տալիս յերիտասարդի մասին հիշյալիված հալածական ճակատագրի պատկերը, այլ ճակատագրին հաջորդող ավազակային կյանքի ծրագիրը, մի ծրագիր՝ վորի համաձայն մեր յերիտասարդն ապրել և գործել և գործել առաջի ճշտությամբ: Կարլն ասում է. «Յեկեք ավազակ դառնանք, ավազակ և մարդասպան... մարդիկ թաքցրին ինձնից մարդկությունը... Ուրեմն հեռի ինձնից կարեկցություն և մարդկային դիմություն»: Իսկ յերիտասարդը գարձել է «Պայլը զայլը բոլոր անդիմությամբ, արկածակնդիր թափառական, մի անդութ ավազակ» և ուխտել է պատճել մարդկանց, վորովհետեւ մարդիկ պատժեցին նրան»: Ուրեմն հերոսներից մեկն ուզում է վրեժխնդիր լինել մարդկանց, իսկ մյուսն արդեն վրեժխնդիր է յեկել. — ի՞նչպես, — ավազակությամբ, անդիմությամբ և մարդասպանությամբ: — ի՞նչո՞ւ, — վորովհետեւ մարդիկ թաքցրել են նրանցից մարդկությունը, կամ

և մինչեւ անգամ ավարի յերբորդ ճասու, վոր իրավամբ պատկանում է միայն իրեն, բաժանում է վորբերին և կամ վճարում ընդունակ տղայոց ուսման համար»: Ռացմանի հալաստիացումների համաձայն՝ նա պատժում է սովորաբար «ճորտերի կաշին հանող հարուստ կալվածատերերին», որենքը նենդող և արծաթով արդարության աչքերը ջրող «լոսկեամուկ փուռ կենդանիներին», «պարոններին»: Նկարագրում են նրա հարձակումը մի «հարուստ կոմսի» վրա. «Ուր են փողերդ, ցած կենդանի, գոռաց պետը, և կոմսն ընկալ... Յես անելիքս պրծա, —կոչեց պետը, «Կողոպտելը ճեր բանն ե, այսպես ասաց հպարտ-հպարտ և մեզնից հեռանալով՝ անհետացալ անտառում:

Յերկու հերոսներն ել վոչ միայն սովորական ավագակներ չեն, այլ, վոր զիխավորն ե, ներկայացված են ավագակին անսովոր նույն հատկություններով: Յեթե յերիտասարդի կենսագրականը վկայում ե, թե նա իր ավագակ յեղել ե միշտ «աղնիվ», ապա այդպիսով վորակում ե տրված ավագակ կարլի արարքներին անշուշտ: Զե՞ վոր նա կողոպտելու նպատակով չի սպանում, արծաթը բնավ գին չունի նրա աչքերին, և ավարից իրեն բաժին ընկած մասը հատկացնում ե վորբերին և ուսման կարուս ընդունակ տղայոց—«Ազնիվ արարքներ, արդարե: Յեթե նա չի կորցրել «իր առյուծի վեհությունը» և, «Զի սիրում հարձակվել տկար կամ վատուժ կենդանիների վրա», ապա պարոնների, կոմսերի, վոսկեճամբուկ փուռ կենդանիների և նման մեծամեծների վրա մի-այն հարձակվելու նախասիրությունն ստեղծում և և' առյուծի պատկերը, և' տկար կամ վատուժ կենդանիների վրա չհարձակվելու վեհաճանձն գաղափարը: Յեթե նա իր առյուծ «իր վորսածի մեծ մասը թողնում ե մանր գաղաններին ուտելու համար», ապա ճիշտ նույն առյուծային վերաբերմունքն ե հայտնաբերում և' կարլը: Կոմսին վորսալուց հետո՝ դիմում ե «Մանր գաղաններին»—«Յես անելիքս պրծա... կողոպտելը ճեր բանն ե»: Այսպես ասաց հպարտ-հպարտ, և մեզնից հեռանալով՝ անհետացալ անտառում»: Պարզ ե, ուրեմն, կարլի հատկությունները, ասպացույցներով արտահայտություն գտած, ստանում են վորակում և առանց հիմնավորման՝ արձանագրվում են յերիտասարդի անվան:

Կենսագրականը շարունակում ե. «Ամբողջ ասաւ տարի հայրենիքից հեռացած այդ թշվառականը կրկին վերադարձալ այնտեղ, յերբ լսեց նրա վտանգը... նա յեկավ վրկելու մի գեղեցիկ արարած, վորին միայն սիրում եր, և վորը միայն եր ամբողջ

աշխարհի մեջ, վոր սիրում եր այն մարդուն, վորին բոլորն աստում ելին»: Ապագային դարձյալ անդրադառնալով այդ խնդրին՝ նա ինքը հետեւյալն ե բացատրում. «Ինձ քաշեց դեպի հայրենիքը մի սիրտ, վորը սիրում եր ինձ: Յես յեկա նրան ազատելու: Հուրից, մորից և աղջականներից անարդված վորուն սիրում եր նա: Նա սիրում եր ավագակին, վորից դժոխքը սարսափում ե, նա սիրում եր յեղեռնագործին, վորին հրեշտակները և սատանաներն ատում են. յես յեկա նրան փրկելու»:

Ահա և կարլը—ուսարության մեջ յերկար թափառումներից հետո՝ նույնպես վերադառնում ե հայրենիք. դեպի իր լքված նշանածը, և ծպտյալ, իրը անցորդ, նրա հետ ունեցած խոսակցության ընթացքին պարզվում ե, վոր այս բոլորի ատելության առարկան նույնպես միայն նրա սրտումը տեղ ունի: «Ոհ, նա մի թշվառ աղջիկ ե, մի կորած մարդու յե տալել իր սերը... թշվառ, վորովհետեւ ինձ սիրում ե. ի՞նչ կասեր նա, յեթե իմանար, վոր յես սրիկա յեմ»: Ամալիան նույնպես բնորոշում ե իրենց սիրությունը. «Մարդասպան, սրիկա.. յես չեմ կարող թողնել քեզ, ո՛վ իմ հրեշտակ, իմ միակո, իմ անրաժանելիս»: Հետեւապես, յերիտասարդը ճեռք ե առել մի ճանապարհ, վորով ընթացել ե կրալը, և դիմում ե գեպի մի նողատակ, վորը յեղել ե և' կարլի նողատակը, այսինքն՝ դեպի մի սեր, վորն իր բնույթով կարլի սերն ե:

Ահա և վերջավորությունն այդ ուշագրավ կենսագրականի. «Բոլոր աշխարհի մեջ հանգստություն, դադար, և իր գլուխը դնելու մի անկյուն չունեցող անբայան ուներ մի կնոջ ճերմ սիրտ, ուր ապրում եր նա, չնչում եր և այնտեղ մոռանում իր կյանքի դառնությունները, թեև տասը տարուց ավելի յեր, վոր չեր տեսել նրան»: Իսկ Ամալիան ծպտված կարլին պատմում ե իր հեռավոր սիրականի մասին. «Նավարկում ե ալեստանջ ծովերի վրա, Ամալիայի սերն ուղեկցում ե նրան, թափառում ե ամայի և աղատ դաշտերում... և խորշակահար ավաղը Ամալիայի սիրով դալար և դառնում նրա վոտքերի տակ: Միջորեյի արեգակը նրա գլուխն այրում ե, փոթորկալի կարկուտը նրա քունքերը հարվածում, բայց Ամալիայի սերն որորում ե նրան մըրիկների մեջ անգամ»:

Յերկու հատվածներումն ել ներկայացվում ե սիրո սիրփիչ աղջեցությունը փորձանքների յենթակա թափառական սիրականների վրա: Յեթե յերիտասարդը նկարագրվում ե իրը ամբողջ աշխարհի մեջ հանգստություն, դադար և իր գլուխը դնելու մի ան-

կուն չունեցող անբազրը, այդպիսով առանց պատկերների, իր բովանդակությունը, արտահայտվում է ալետանջ ծովերի, ամայի և ազատ գաշտերի, խորչակահար ավագի, միջորեյի արեգակի և փոթորկալի կարկուտի պատճառած տանջանքներին յենթարկված թափառական կարլի ճարկառագիրը։ Յեթե յերիտասարդն այդ վիճակի մեջ յերջանիկ է, վոր ունի մի կոնջ ջերմ սիրտ, ուր ապրում էր նա, չնչում էր, այդպիսով փորձ է կատարվել համապատասխան պատկերավոր արտահայտությամբ փոխանցել նրան կարլի յերջանկության մասին վկայող այն պատկերավոր արտահայտությունը, թե «Ամալիայի սերն ուղեկցում էր նրան... որում էր մրրիկների մեջ անգամ»։<sup>\*</sup>

Այժմ, արդեն, մենք լավ ենք ճանաչում այդ յերիտասարդին, վորը թեպետ իր հայ, ինչպես ինքն և վկայում, տասը տարի շարունակ շրջել է հայկական միջավայրում և գործել է հայության դատի համար, բայց այժմ պարզվում է, վոր նա 18-րդ դարու գերմանական Sturm und Drang -ի հարազատ արտահայտիչ նշանափոր հրոսապետ կարլ Մոորն է, վորն իր ծնունդից ուղիղ հարյուր տարի հետո փոխազդվել է Հայաստան և կրկնել է իր կյանքի վորոշ մասը՝ ծպտված՝ իր հայ և ինչպես շուտով պիտ պարզվի Սարհատ անունով։ Զարմանքը պաշարում և մեղմ-միջն թե Սարհատը կարլ Մոորն է, այն Սարհատը, վոր վաթսուն տարի շարունակ անդիմապերելի ուժով արգել է հայ իրականության վրա, վորի գործունեյությունը լայն ուղիներ և գծել հայ բուրժուական գաղափարախոսության և քաղաքական գործունեյության համար<sup>\*\*</sup>, վորի կյանքի պատմությունը, ըստ մի սրամիտ նկատողության, ունեցել է այդ պատմության հեղինակի և հայ ազգայնական քաղաքական գաղափարախոսությունների համար այն նշանակությունը, ինչ նշանակություն վոր ունեցել է «կոմունիստական Մանիֆեստը» կարլ Մարքսի և մարքսիստների ասպարագական և քաղաքական գործունեյության համար։ Յեկ վորովհետեւ, ինչպես մեր համեմատությունը ցույց տվեց, ճիշտ այդպես է,

\*) Յերիտասարդի յերջանկությունն արտահայտող այդ ձեփ փորձը համեմանացն դեպու ձախագեր արդյունք և տվել։ Յեթե Ամալիայի սերն ուղեկցում է կարլին, նշանակում է Ամալիան նրա սրառումն եւ. նա սիրում է իսկ յեթե յերիտասարդն ուներ մի կոնջ ջերմ սիրտ, ուր ապրում էր նա և չնչում էր» նշանակում է սերն եր ուղեկցում կոնջ, հետեւապես կինն է սիրողը, վարով յերջանկացողի բախտն եւ հակառակ ցանկության, նրան և բոժին ընկել։

\*\*) Սուրխաթյան. — Հայ գրականություն. հատ. 1 1926 թ. էջ 164-65-169

ապա ուրեմն մենք պարտավոր ենք հետեւել և՛ նրա սկսած ներկա ճանապարհորդության հաջորդ ընթացքին, պետք է տեսնենք, թե Սարհատը հաջորդիվ արդյո՞ք մնալու յև իբր Կարլ Մոոր, թե՝ ինքնուրույն ուղիով ե ընթանալու։ Այս ինդրի հետազոտման պարինքնուրույնում է մեզ հայոց քաղաքակալիթության պատմությունը, տավորեցնում է մեզ հայոց քաղաքակալիթության պատմությունը, ուր մեկնարկություն պիտի ստանա ինչպես Բաֆֆիի ստեղծությունից, նոր մեկնարկություն պիտի ստանա ինչպես Բաֆֆիի ստեղծությունից, նույնական գաղափարախոսական զարգացումը, նույնական ծագութական-գաղափարախոսական զարգացումը, զբականության հայոց զաղափարախոսության պատմությունը, զբականության պատմությունը։

## Բ.

«Ավագակներ»-ի III արարի վերջում, նորեկ ավագակ Կունակություն արկածալից սիրո նկարագրությամբ, բոնկվում է ոստասինսկու արկածալից սիրո նկարագրության մեջ թափառող կարլի սերը դեպի իր նշանածը։ Նա իսրության մեջ թափառող կարլի սերը դեպի իր նշանածը։ Կունակաման և արձակում ճանապարհ ընկենել դեպի Ֆրանկոնիա, կունակաման և արձակում ճանապարհ ընկենել դեպի հայրական դղյակը, ուր ապրում է և՛ Աւայնսեղ և գտնվում իր հայրական դղյակը, ուր ապրում է և՛ Աւայնսեղ։

Մենք տեսանք, թե ինչպես Սարհատի գործունեյությունն սկսվում է կարլի հենց այս յերկետից։ Թե ինչպես նա ոտարությունից նույնական վերաբանմում է հայրենիք, նույնպես փնտությունից իր նշանածին — Ասլիին։

«Ավագակներ»-ի IV արարի հենց սկզբում կարլն արդեն հայրենիքումն է, կանկնած և իր հայրենին-Մոորերի դղյակի առողջությունում է, կանկնած և այլ հայրենին-Մոորերի կուծում են նրա ծե։ Զարթնող մանկության հուշերն իրը ալիքներ կուծում են նրա հոգին և հաջորդում միմյանց։ Եաւ՝ վողջունում է բնությունը և ապա հարում է. «Տես, ահա գավթում ծիծեռնակի բույնը, ահա պարտեղի զանակը... և ցանկապատի անկյունը, ուր ծաղրում են իր յերպչին... Ահավասիկ այն հովիտը, ուր գու, Աղեքսանդր դյուցազնդ, ի մարտ ելիր վարում քաջերիդ Արքելայի մոտ, և նրան կից այն գալարուն բլուրը, ուստի գահավեժ գլորեցիր պարսից զարքի մարդաբանին... Մանուկ հասակիս վասկի որերը նորից են արթնանում յեղիկիիս հոգու մեջ... Այն ժամանակ դու յերջանիկ ելիր, այդ, զարթ, իսկ այժմ... ահա բոլոր հույսերդ ի չիք դարձան... Զարթ թշնամին ծուռ նայեց վրագ»։

«Զալալեղդին»-ի Դ. դլիում նկարագրվում է, թե ինչպես Սարհատը, ուշք չղարձնելով ճանապարհի վրա վառվող հայկական դյուղերին, վերջապես, ահա, հասնում է Յերասան դյուղը և կանու

և առնում հայրենի հրդեհված տան առջև. «Այս տնակի մեջ անցել եր նրա մանկությունը, այստեղ եյին բնակվում նրա ծնողքը, քույրերը և յեղբայրները, վորոնք այժմ չկային... Ահա այս գորդի վրա շատ անդամ նստում եր իր ծերունի հայրը... Ահա այս վերմակի տակ շատ անդամ քնել եր ինքը... Ահա այս տաշտի մեջ խմոր եր հունցում իր մայրը... Ահա այս մեծ թասը, վորի մեջ իր քույրը կթում եր վոչխարները... Մի խոսքով նրանց ամեն մեկը զարթեցնում եր իր մեջ հին հիշատակները...»: Այսպիսով, Կարն ու Սարհատը վոչ միայն ունին նույն արտաքին վիճակը, այլև նույն հոգեկան բովանդակությունը.—ի տես մանկության որբանի՝ նույն ելեկիական զդացումն ե, վոր լեցվում ե նրանց սիրու: Թեպետե, համաձայն զերմանական զդյակի և հայրական խրճիթի տարրերության, նրանց մանկության հուշերը տարրեր առարկաների հետ են կապված, բայց ակներեւ ե, վոր նրանց հաջորդական հիշատակումը կատարվում ե բացահայտ հետեղականություն ցուցադրող նման վոճով. «...Ահա զավթում ծիծեռնակի բույնը, ահա պարտեղի դրանկան, ահավասիկ հովիտը, այն զաւարուն բլուրը և այլն» և կամ «Ահա այս գորդի վրա... Ահա այս վերմակի տակ... Ահա այս տաշտի մեջ... Ահա այս մեծ թասը և այլն»:

Կարլը ներս է մտնում զդյակ և կանգ է առնում հոր պատկերի առջև: Դանիելը մեղ հայաստացնում ե՝ «Թե նա իր աչքերը սըրբում եր»: Իսկ Սարհատի հայրենի տան վիճակը և վոչչացող ծնողաց, քույրերի և յեղբայրների մտարերումը քամեցին «Նրա աչքերից մի քանի կաթիլ արտասունք, վորոնք գլորվեցան գունաթափ յերեսի վրա»:

Կարլը վերադառնում է զեպի իր խումբը, վորն անտառում է տեղավորված: Այստեղ նա քայլերն ուղղում ե զեպի քայլայված դրակից լսվող մրմունչները և փոսի միջից գուրս ե բերում մահվան դատապարտված իր հորը: Սարհատը շարունակելով ճանապարհը, իրենց գյուղից քիչ հեռու մահվան դատապարտվածների խուլ մրմունջ և լսում, զնում ե այդ ուղղությամբ և գտնում է իր մահամերձ հորն ու գրկում նրա գլուխը:

Ծերունի Մոռը կարծում ե, թե Ֆրանց վորդին է խոսակիցը. նա վստահ ե, թե այժմ պիտի սպանիլի, վորով վերջ պիտի դանեն իր տանջանքները, այդ պատճառով բացականչում ե. «Փառք քեզ, աստված, փրկության ժամս հասավ»: Սարհատի հայրը, սակայն, ճանաչում է իր վորդուն, թեպետե տարրեր իմաստով, բայց ար-

ձակում ե նույն բացականչությունը. «Հիմա, տեր, առ հողիս, վորովի հետեւ մեռնում եմ վորդուս գրկի մեջ»:

Ծերունի Մոռը, ի վերջո, յերբ այնպես է համոզվում, վոր իր ձեռքերը սեղմողը վոչ թե Ֆրանցը, այլ մի ոտար մարդ ե, հայտնում է հետեւյալ ցանկությունն ու վիշտը. «Վո՞չ, յերանի թե սա լիներ Կարլոսի աջը... Զունենալ վոչ մի վորդի, վոր աչքերս վակերը»: Իսկ Սարհատի հայրը հաստատ դիտենալով, վոր իրեն գրկաղը վորդին ե, նախորդի ցանկությունն արտահայտում է իրականության իմաստով. «Ճար տարի կորած վորդիս, այժմ կը փակե հոր աչքերը»:

Ծերունի Մոռը ձեռքը դնում է Կարլի գլխին և որհնում է նրան. «Վորչափ վոր գթասեր ես, այնքան ել յերջանիկ լինիս»: Սարհատի հայրը «Իր թույլ ձեռքերով բարձրացրեց այն սիրելի գլուխը և ասաց. «Սարհատ, աննման Սարհատ, թող որհնեմ քեզ, հետո մեռնեմ»:

Այս տարրինակ հանդիպման պահում թե՛ Կարլը և թե՛ Սարհատն ունենում են իրենց մահամերձ հայրերի հետ յերկար խոսակցություն, վորը վերաբերում ե, ընդահնուր առմամբ, չարեցի վերլուծմանը, մի չարիք, վորի հեղինակն այնտեղ ներկա գեղագում ֆրանցն ե, իսկ այստեղ նրան հակադրված են քյուրդերը:

Բայց Սարհատի և հոր հանդիպման այսպիսի աքտագիրն պատահերով և միայն հետեւողություն Կարլի և հոր համուխման: Զարիքի վերլուծման համար նրանց խոսակցության նյութ և մատակարարում այժմ վոչ թե Կարլի, այլ հենց Ֆրանցի այն մտքերը, վոր նա «Ավագակներ»—ի և արարում արտահայտում է իր հորը, նրա սերը Կարլի նկատմամբ չեղոքացնելու համար, և այն համբավակոր մենախոսության մեջ մահավանդ, ուր պարզում է իր կենաւիկիսովայությունը և հիմնավորում իր արարքները: Ահա այս մտքերն են, վորոնք կազմել են Սարհատի գործունեյության գաղափարական հիմունքը, վորոնք հետո միացել են Դալի Բարայի և Քիթար-Դալիսիլ մտքերին և կազմել են «Զալալեղդին»-ի ընդհանուր գաղափարական կառուցվածքը:

Ֆրանցն իր հոր ներկայացնում է Կարլի մանկության բնութագիրը. «Մի՞թե յես չեյի գուշակած այս ամենը, յերբ նա զեւ մանուկ գործ ընկնում եր աղջիկների հետեւյց, քարչ եր գալիս սարերում ու գաշտերում վողոցի անկարգ ու զարդի աղայոց հետ, փախչում եր յեկեղեցու տեսքից, ինչպես վոր հանցափը բանտից և առաջին իսկ մուրացկանի գտակը նետում եր ձեզնից խլոծ

փողերը։ Մինչդեռ մենք տանը նստած ճգնում եյինք մեր հոգին վրկել բարեպաշտ աղոթքներ և սուրբ գրքեր կարդալով... Միթե գուշակած չեյի այս բոլորը, քանի վոր նա ավելի ախորժում եր կարգալ Հոռիս Կեսարի, Մեծն Աղեքսանդրի և մյուս խավարացին հեթանոսների արկածները, քան թե Թորիաս ապաշխարողի վարքը...»։

Ինչպես մենք տեսանք, Սարհատի հայրը ցանկություն հայտնեց նախ՝ որհնել վորդուն, հետո մեռնել, բայց ստացած պատասխանից պարզվում է, վոր վորդին որհնություն լսելու ամենին ցանկություն չունի։ Հայտնելով, վոր հայրենիքից հեռանարու պատճառը հայրն ինքն է յեղել, շարունակում է. «Յես անառակ վորդի չեյի, յես փչացնող և արբեցող չեյի, յես միայն սիրում նյի զննքեր, սիրում եյի ձի, սիրում եյի վորսալ։ Իմ զվարձությունները համեստ եյին։ Իսկ այդ բոլորն առում եյիր դու։ Ինձ դու ձգեցիր վանքը և կամենում եյիր ինձանից ճգնավոր, աղոթող պատրաստել։ Այնտեղից յես փախա»։

Ֆրանցի հարուցած մեղադրանքները պատճառ յեղան, վոր Կարլն ընդմիշտ հեռացիի հայրենական տնից, այժմ պարզվում է, վոր ճիշտ նույն մեղադրանքներն են, վորոնք պատճառ են յեղել և Սարհատի հեռացման հայրական տնից։ Սարհատն այժմ տալիս է Կարլի դեմ, հետևապես և՛ իր գեմ ուղղված մեղադրանքների բացատրությունը միայն, առանց նրանց հականե հանվանե հիշատակելու։— Այսպիս—ֆրանցն ասել եր, թե Կարլը մանուկ ժամանակ աղջիկների հետելից քարչ եր զալիս։ Սարհատն արգարանում է այդ զրպարտության դեմ—«Յես անառակ վորդի չեյի»։

Ֆրանցը շարունակում է՝ թե նա փողոցի զաղիր տղայոց հետ սարերում և դաշտերում և թափառում։ Սարհատը բացատրում է՝ թե դա անմեղ նպատակի համար է յեղել, նա սիրել է վորսալ, սիրել է ձի, սիրել է հրացան։ Ֆրանցը հարում է՝ թե Կարլը հորից խած գրամը նետում է մուրացկանների գրանը։ Սարհատը զարձյալ արդարանում է, թե նա փչացնող չե։ Իսկ ինչ վերաբերում է Ֆրանցի հիշատակած այն փաստին, թե Կարլը փախում եր յեկեղեցու տեսքից, ինչպես հանցավորը բանտից, Սարհատը խոստովանում է իր արարքը և այդ առթիվ տալիս է հետեւյալ բացատրությունը. «Դու ինձ ձգեցիր վանքը և կամենում եյիր ինձանից ճգնավոր, աղոթող պատրաստել, այնտեղից յես փախա»։ Ուրեմն—ինչպես Սարհատի նախորդ կենսագրական հատվածում Կարլի արարքները սոսկ վորակում ստացան և վերադրը...

«Եցին Սարհատին, նույնը կատարվեցավ և այժմ—Սարհատը չի-շատակեց Կարլի արարքները, այլ նրանց վորակեց միայն և իրեն վերադրված հայտարարեց։

Ֆրանցը հոր հետ ունեցած այս խոսակցությունից անմիջապես հետո արտասանում է իր մենախոսությունը, սակայն նախքան այդ մենախոսության և նրա հետեւղությամբ Սարհատի արտահայտած մտքերի համեմատության անցնելը, պարզենք նրանց ընդհանուր բնույթը։ Ֆրանցի մենախոսության մեջ արտահայտություն և գտել լուսավորության դարու մատերիալիստական աշխարհայեցողության մտորումները, իսկ Սարհատի մտքերի մեջ արտահայտություն և գտել հայ բուրժուական ինտելիգենցիայի մեջ մուտք գործած դարձված սկզբունքները։ Ֆրանցն իր այդ աշխարհայեցողությամբ ուղղում է բացատրել սոցիալական կյանքի վոխհարաբերությունները և նրա վրա կառուցած սովորմուլ և ցե-նիզմով հիմնավորել իր արարքները և հանգստացնել խիզձը։ Սարհատը մատերիալիստական ըմբռումներին հակադրելով դարվի-նիզմը գոյության կովի տեսությունն ընդունում է իրը զիտական անառարկելի հիմունք իր ազգայնական տենդենցներին և նրանով, սոցիալական հարաբերությունների վիտիսարեն, բացատրում ե աղղությունների վիտիսարաբերության խնդիրը և արդարացնում իր աղքայնական մտքերն ու արարքները քյուրղերի հանգեպ։ Բայց այս չափով միայն Սարհատն ու Կարլը տարբերվում են միմյանցից, նրանց հիմնական մտքերի զասավորման և արտահայտության ձևի մեջ այնուամենայիլ անհջմար չի մնացել Կարլի տղղեցությունը Սարհատի վրա։

Այսպիս— Ֆրանցը բնության որենքների վրա կառուցված հետեւյալ փիլիսոփայությունն է պարզում կյանքի մասին. — «Մերկ ու թշվառ ձգեց նա (բնությունը) մեզ այս անսահման ովկիսանոսի յեղերքը, վորի անունն և աշխարհ։ Լողա, յեթե կարող ես լողալ, իսկ յեթե անկարող ես—տակն անցիր։ Նա ինձ վոչինչ չտվալ, բայց ինձնից ե կախված զառնալ ի՞նչ և կամենամ... Պահանջը պահանջով, կիրքը կիրքով և ուժը ուժով և խորտակվում։ Իրավունքը միայն հաղթողինն է և մեր զորության սահմանն է մեր որենքը։

Ֆրանցի այս զաղափարներին Սարհատը հակադրում է իրը, տարբեր առիթներում, տարբեր արտահայտությամբ։ Նախ՝ Խոշաբա ձորից դուրս գալիս, յերբ արյունաթաթախ ընտանիքն ու գյուղերի վոչինչ ացումն և տեսնում՝ զայրանում է, թե ինչո՞ւ

Տես, Փրանց Մերինց մировая литература и пролетариат (Եջ 51).

Հայն աճպատրաստ Ե կյանքի համար պայքար մղելու . այս զայրույթը նրան առաջնորդում է հետեւյալ խորհրդածության . «Ովչ չե հասկացել , կամ չի ուսում հասկանալ ապրելու պայմանները , կյանքի իրավունք չունի : Այս պայմաններն այնքան վոխվում են , վորքան փոխվում են նրանց պահանջները , — յերբ հարկավոր ե խելք բանեցնել , խելքին զոր տալու յէ , իսկ յերբ պետք ե սուր մարդ պիտի պատրաստ ունենա . նրան իր ձեռքում : Մարդկային կյանքը ներկայացնում է մի սարսափելի կովի հանդիսարան , ով վոր ընդդիմության ընորհք չունի , նա սիրտի ընկնի , անհետանա , վոչնչանա » , նա մտածեւմ եր , «Յերբ գառին վիճակիլել ե գայլքնետ մխասին կենցաղավարել , ինքն ել պետք ե աշխատի գայլքատամներ ունենալ , յեթե չի ցանկանում կատաղի գաղանին կերպուր գառնալ » :

Ֆրանցը բացատրում է գոյության պայքարը . — նա պատկերացնում է աշխարհն իրը մի ովկիան , ուր լողալ չդիտցողը տակը կանցնի : Սարհատը նույնպես բացատրում է գոյության պայքարը , նրան տալով նույնպես պատկերավոր արտահայտություն . — կյանքը կովի հանդիսարան է , ով ընդդիմության ընորհք չունի , նա կընկնի : Ֆրանցն ասում է . — պահանջը պահանջով , կիրքը կիրքով և ուժն ուժով ե խորտակվում , այսինքն՝ մեր վրա ազդող յուրաքանչյուր ուժի պետք ե հակաղղել համապատասխան ուժով . այս է կյանքի մեջ հաջողելու պայմանը : Սարհատի մյուս բոլոր մտքերը տարբեր արտահայտություններն են Ֆրանցի այս փիլմատիայության , վորն ողտագործվելով , նախ՝ իրը ներածություն՝ ստացել ե ընդհանուր , տարտած և բոնազբոսիկ արտահայտություն , վորի իմաստն այն ե , թե ապրելու պայմանները պետք ե փոխվեն՝ համաձայն նրանց պահանջների փոփոխության : Հաջորդ տողերի մեջ այդ դաշտափարն ստացել ե ավելի վորոշ ձե . — ուր զգացվում է խելքի պահանջ , պետք ե գործածել խելք , իսկ ուր սրբի պահանջ՝ պետք ե գործածել սուր և կամ նույն իմաստի ավելի իրական արտահայտությամբ . — յերբ գայլի ատամների հետ ե գործ՝ պետք ե զինվես նման ատամներով :

Ֆրանցը շարունակում է իր մենախոսությունը . «Ճշմարիտ ե , տիեզերական բոլորակի յերակները շարժելու համար կան հնարդած ընկերական դաշինքներ . որինակ՝ պատվախոր անուն . . . արդարեւ արեւելք ունեցող մի դրամ , վոր կարելի յէ շատ լավ շահեցնել , միայն թե գործածության յեղանակն իմանաս : Խիզճ . . . ու , այս , մի պատվական խրամիլակ , մնազուկներին պարտեզից դուրս

քելու համար . . . կամ լավ դրված մի մուրհակ , վոր յերբեմն անանկին անդամ պետք ե գալիս նեղ որին : Զիբամիլի շատ գոյլելլ գյուտեր են սրանք , հիմարներին սահճելու և ուսմիկներին վոտի տակ պահելու համար , վորպեսզի խելուքներն ավելի լավ կյանք վարեն . . . կատակը թողնենք , շատ ճարպիկ գյուտեր են սրանք . . . »

Սարհատի գանգատները , ուղղված հորը , այսպես են շարունակվում . «Այնուհետեւ խոփն ու բահը , գերանդին ու մանգաղը՝ այդ բաներն ասածարկեցիր ինձ : Յես ընդունեցի , բայց առանց հրացանս թողնելու , վորովհետեւ տեսնում եյի , վոր քուրզը հափշտակում եր մեր վար ու ցանքը , մի բանով պետք եր պահպանել նրան : Բայց դու ինձ խրատում եյիր . մենք հայեր ենք , մեր պլուսը պետք ե միշտ ցած ծոած լինի . մեր լեզուն միշտ մունջ պետք ե լինի և մեր ձեռքը պետք չէ , վոր բարձրանա ոտարի գլխի վրա — զբանքը եյին քո քարոզները : Բայց յես տեսնում եյի , քանի վոր գլուխս ծոսում եմ , ավելի շատ են ծեծում , քանի վոր լեզուս մունջ եմ պահում , ավելի շատ են հայհոյում . . . յես տեսնում եյի , յերբ ձեռք չեմ բարձրացնում , յեղած չեղածս խլում տանում են , և յես մնում եմ աղքատ ու քաղցած : Բայց դու ամեն ինչ աստծու միա եյիր ձգում և պատվիրում եյիր ինձ համբերել . . . Յես սկսեցի չհավատալ աստծուն , յերբ տեսնում եյի , վոր նրա աչքերի առջեւ ամեն տեսակ չարագործություններ կատարվում են և նա մնում ե անտարբեր » :

Ֆրանցի մենախոսության առաջին մեջքերումը վերջանում եր պահանջը պահանջով , կիրքը կիրքով ուժն ուժով ե խորտակվում : Սարհատը , ինչպես տեսանք , ողտագործեց այս գաղափարը նախ Խոշաբա ձորում , յերեք տարբեր արտահարտությամբ : Այժմ , հոր ներկայության՝ տալիս ե նրան , նախկիններից տարբեր չորրորդ ձևալորումը . . . նա չի հրաժարվել հրացանից , վորովհետեւ իր վար ու ցանքը պաշտպանության համար ուժով պետք ե գիմադրել քրդի գործած բռնության :

Ֆրանցն ասում է . . . տիեզերական բոլորակի յերակները շաբաթելու համար հնարված են «Ծնկերական դաշինքներ» , «Պատվագոր անուն» , «Էլիդճ» , կամ «Լավ դրված մի մուրհակ» : Բայց արանք «Խրամիլակներ» են , վորոնք սարքված են հիմարներին սահճելու և ուսմիկներին վոտի տակ պահելու համար , վորպեսզի խելուքներն ավելի լավ կյանք վարեն :

Սոցիալական այս փոխհարաբերությունն ահա թե ի՞նչ ձեռվ վերածվել ե ազգայնականի . . . Սարհատին սահճելու և վոտի տակ պահելու համար՝ հայրն արդեն ստեղծել ե իր քարոզներով նման

«Խրտվիլակներ»: Որինակ՝ «ՄԵՆՔ ՀԱՅԵՐ Ենք, մեր գրուխը պետք է միշտ ցած ծառծ լինի, մեր լեզուն միշտ մունջ պետք է լինի և մեր ձեռքը պետք չե, վոր բարձրանա ոստարի դլիսի վրա: Յեվ կամ՝ աստված կա, նրա կարգադրության պետք է համբերել: Բայց մինչ Սարհատն այսպես իբր «Հիմար» սանձվել է և կտմ իբր «ուսմիկ» վոստի տակ է պահվել, նույնքան «ԽԵԼՈՔ» քյուրղերը նրան ավելի հաճախ են ծեծել, հայհայել և ունեցած չունեցածը հափշտակել, այսինքն՝ ի հայրի Սարհատի ավելի լավ կյանք վարել:

Ֆրանցը համոզում է ծերունի հորը՝ ընտանեկան հարկից ընդմշտ արտաքսելու կարլին, վորը «Վոտնակով» և անում անտուակ հեշտության մեկ վայրկյանի մեջ իր պատերի արդեն յոթը դարանիքին պահված համբարին ու հոչակը». ծերունին համտճայնվում է. «Յես նրան կը զրեմ, վոր ձեռքս նրանից հետ եմ քաշում, վոր այլևս աքչիս չերենա»:

Սարհատը շարունակերով իր դանդատը՝ հարազատորեն ներկայացնում է նույն հարաբերությունը, սուանց խուսափելու նույնիսկ արտահայտության նման ձեւերից. «Իսկ քո բարկության չափն անցավ. դու արտաքսեցիր հոր տնից անառակ վորդուն, վոր իր պատերի սովորություններով չեք գնում, վոր ատում եք ատրկական խոնարհությունը, վոր չեր սերում իր հալածողի վոտֆերը լիդը»:

Հորը հարցին՝ թե տնից արտաքսվելուց հետո ո՞ւր դնաց նաև ի՞նչ կատարեց. —Սարհատը պատասխանում է մի բացատրական ճապաղ քարոզով, վորն ավելորդ անդամ կառուցված է պահանջով՝ պահանջը, ուժով, ուժը և կերպով՝ կերպը խորտակելու ընդհանուր սկզբունքի վրա: —Եա բացատրում է, թե դարձել է ավաղակ, վորովհետեւ ավաղակները, սպանողները, կողոպտղներն ավելի բախտավոր են, իսկ բարիները, վոչ ավաղակները թշվառներ են. յեղակացնում է. «Զարի հետ պետք է չար լինել, բարի հետ՝ բարի, այս է պահանջում անարդար մարդկությունը». նա անիծում է իր պատերին, վոր այդ առողջ սկզբունքն անտեսելով, բոլորովին հակառակ մտքերով են մնուցել նոր սերունդը—«Բարի լինել, հնաղանդ լինել, համբերող լինել»: Հայրն ի սիրչո սաստում է վորդուն՝ մի՞թե նա յեկել է անեծքներ միայն թափելու:

Սարհատը բացատրում է, թե նա յեկել է փրկելու մի գեղեցիկ աղջկա, վորը միակն է, վոր սերում է ավաղակին և այն... Բայց այս բացատրության հետ մենք արդեն ծանոթացանք հերոսի կենսագրական հատվածի վերլուծման առթիվ:

Սորա հայրը, հոգեարքի վերջին բողեներին, դարձյալ դիմում է կարլի մաս ընկած ծերունի Մոորի ողնության և կրկնում է նրա որհնությունը. «Դուն անիծիր, բայց յես որհնում եմ քեզ»:

Ծերունի Մոորը, հակառակ ֆրանցից կրած ահավոր տանջանքներին, այնուամենայնիվ իր վերջին վայրկյանին, իբր հայր ներողամիտ է գեալի նա. «Ներողություն լինի նրա պատիժը, իսկ վրեժս կրկնապատկված աեր»:

Իսկ Սարհատի հայրը, հակառակ վորդուց ներկայիս կրած տանջանքներին, դիմում է նույն հայրական ներողամտության. «Աստված, ներիք վորդուս» և ավանդում է իր շունչը:

Պ.

Կարլն իր հոր հանդիպելուց առաջ, IV արարի սկզբներում, Ամալիայի հետ ծպտյալ խոսելուց հետո, դպյակում հանդիպում է Դանիելին, Մոորի հավատարիմ ծերունի ծառային: Նա իր մանկության այս մտերիմից դպյակում անցած դարձածի մասին քառում է սպասիչ տեղեկություններ:

Սարհատը նույնական հանդիպում է իրենց տան հավատարիմ ծառային, յերիտասարդ Մատոյին, բայց վոչ մահամերձ հորը հանդիպելուց առաջ, այլ նրան թաղելուց անմիջապես հետո — վեպի Ե. Համալածում — այն ճանապարհին, վորով ընթանում է, Ասլիի բնակած գյուղը գնալու համար: Սարհատն իր այս մտերիմից և խաղընկերից նույնական քաղում և սպասիչ տեղեկությունների իրենց տանը և գյուղում կատարված բոլոր կրաղարձությունների մասին:

Յերկու ծառաների և նրանց տերերի հանդիպման վայրկյանի մեջ կա այն միակ տարբերությունը, վոր կարլն սկզբում իր անձը թաքցնել է փորձում, իսկ Սարհատն անվերապահությունիւն հայտնվում է: Դանիելն ամուր բոներով անձանոթ ձեւացող կարլի ձեռքերը և չոքելով նրա առջե՝ ուրախությունից շաղակարատում է. «Ոյ», ձեացեք, ուրացեք, լավ, լավ... բայց և այնպես իմ սերելի պատվական տերն եք դուք... ինչ հիմար ավանակ եմ, վոր ձեզ իսկույն... ա՛խ, յերկնարկոր հայր, ուրեմն վերադարձա՞ք... ուրեմն դուք յեկա՞ք... ի՞նչ է եյի, վոր ձեզ տեսնելու պես, նույն լոռեցին...»:

Մատոն վասթաթվելով Սարհատին և ջերմ համբույրներ սըփուկ նրա ամսերին, կրկնում է Դանիելի խոսքերի իմաստը նույն

շաղակբատ վոճով. «Յերեխ իմ տերը չի ճանաչում իր ծառա-  
յին, ... ա՞ևս, վորքան հիմար եմ յես, Սարհատ... քիչ եր մնում,  
վոր ճանաչելի քեզ...»:

Կարլը դեռ չի ուզում հայտնվել Դանիելին, իսկ սա շարու-  
նակում է. «Լավ ե, լավ... աղա սպին չե՞ք հիշում...» և նույն  
շաղակբատությամբ շարունակում ե նկարադրել հերոսի մանկու-  
թյունից մի արկած, վորի հետեւանքով ձեռքի վրա դոյցել և  
այդ սպին:

Մատոն ճանաչում ե Սարհատին նույնպես սրա ապիկ ողնու-  
թյամբ. «...Հենց վոր տեսա՝ մտա թփի յետեւ, հրացանս ուզ-  
գեցի... հենց արխկացնելու վրա եյի, մեկ ել աչքս ընկալ ճա-  
կատիդ սպին, ինձ ու ինձ ասացի. դա աղան ե»:

Դանիելը պատմում ե անցած հիշատակելի գեղոքերի մասին,  
թե ի՞նչպես նրան «աշխետ նժույդի» վրա նստեցրել ե ման ե ա-  
ծել դաշտերում:

Մատոն հիշատակում ե նույնպես իր տիրոջ ձիու մասին. «Քո  
քուռակն են տարան, Սարհատ, այն կապույտ քուռակը, մի տես-  
նելիք ի՞նչ լավ ձի յեր գարձել... ուստացնում, չաղացնում եյի,  
մի որ աղան կզաք, կնստի...»:

Կարլը վերջապես հայտնվում է Դանիելին և Ամալիայի մա-  
սին անմիջապես տեղեկություն ե պահանջում. «Ասո՞ւ, ի՞նչ ե  
անում Ամալիան»: Դանիելը, արցունքն աչքերին, պատմում ե իր  
«լուսահոդի» տիրոջ և Ամալիայի կրած զրկանքների մասին, և  
մերկացնում ե, առհասարակ, ֆրանցի բոլոր չարագործություն-  
ները:

Սարհատը նույնության տեղեկություն ե պահանջում յուրային-  
ների մասին. «Դու են ասա, Մատոն, մի բան դիտե՞ս մօրս, քույ-  
րերիս և յեղբորս մտախ»: Մատոն, նույնպես հուզված, նկարա-  
գրում ե նրա ընտանիքի անդամների և տեղակմն հայ աղդաբնակ-  
չության կրած տառապանքները և մերկացնում ե քրգերի բոլոր  
չարագործությունները:

Դանիելը, ի միջի այլոց, հիշեցնում է Կարլի վեռ անկատար  
մի խոստումը, մանկությունից մնացած. «Դանիել, ասացիք դուք,  
սպասիր, յերբ մեծանամ, Դանիել, այն ժամանակ իմ տնտեսը  
կը դառնաս ինձ հետ միասին կառք կնստես, այս՝ ասացի յես ծե-  
ծաղելով, յեթե աստված առողջություն ու կյանք չնորդեն և դուք  
չամաչեք ծերուկից, յես կը խնդրեմ սպասիմ ինձ դյաւլի միջի  
փոքրիկ տունը, այսուել մի քանի դույլ գինի կը դնեմ և ծախս կա-  
նեմ ծեր հասակիս»:

Կարլի այս խոստումը կատարել և այժմ Սարհատի հայրը  
Մատոնի նկատմամբ. «Դու չե՞ս իմանում, Սարհատ, յես ախաչ  
հիմա կին ունեմ, մի յերեխա յել ունեմ, մի սիրուն յերեխա:  
Հայրդ (աստված նրա հոգին լուսի բաժին անի) ինձ պատկեց, մի  
լավ աղջիկ բերեց և հարցուր վոչխար ել ավեց. ասում եր, Մատոն,  
բավական ե, ինչ վոր ծառայեցիր, դնա, գրանից հետո քեզ հա-  
մար սպարիր, տուն ու տեղի տեր գարձելիր, բայց յես... ասում եի,  
չե, աղա, քո տան մեջ պետք ե մեռնեմ, և քանի Սարհատը չի յե-  
կել, յես քո մեծ վորդին կը լինեմ»: Կարլին հուզում են Դանիելի  
խոսքերը. «Փարզում ե նրա վկին», հայտնելով, «Յես պատրաստ  
եմ կատարել, ինչ վոր խոստացել եմ... առ այս աշխետ ձիու փո-  
խարեն, աղինիվ ծերունի... յես քեզ չեմ մոռացել»:

Նույնպես Սարհատի «սիրուր չեխմացավ այս խոսքերին, նա  
զրկեց Մատոնին և ձակատիցը համբուրեց, ասելով՝ «Դարձյալ դու  
իմ յեզրայրը կը լինեմ, բարի Մատոն, յես քեզանից չեմ բաժան-  
չի...»:

Ծերունի Դանիելը ֆրանցի զավադրությունների և վոճա-  
գործ դիտավորությունների վարագույրը բանալուց հետո՝ հե-  
ռանում է, թողնելով Կարլին մուայլ տրամադրության մեջ: «Սար-  
հափելի լուսվյունից սթավվելով», նա արտասանում է իր դառնա-  
գույն մենախոսություններից մեկը: Նրա թույնն ուզգված ե վոր-  
չափ ֆրանցի «գիշային նենդության, վատթար խարեյության,  
վոճարագործության, նույնքան և իր հրեշտակին հիմարության դեմ: Զե՞ վոր նա կարող եր առ առջե ծունը չորեկ և ներություն  
խնդրել, մի կաթիւ արցունք բավական եր, վոր նա յերջանիկ լի-  
ներ, մինչդեռ այժմ դարձել ե մարդասպան, ավագակ:

Մատոնի ամփած տեղեկությունները, քրդերի գործած  
բարբարոսությունների մասին, Սարհատին ևս նետում են մոռայլ  
տրամադրությունների գիրկը, բայց այս արամադրության խտաց-  
ման և արտահարության համար ներկայացվում է հաջորդ Զ.  
Հատվածում հետեւալ գեղքը: Բրդական մի կարտագան և հայտնը-  
վում հայ բազմաթիվ գերիներով, այսպիսով միջոց և ստեղծ-  
վում, վոր Մատոն հեռանա իր տիրոջից, իմանալու, թե այդ գե-  
րիները վո՞ր տեղից են բերվում և ու՞ր են տարվում: Մատոնի մեկ-  
նումից հետո՝ Սարհատը մի բարձր բլուրի վրա կանգնած զի-  
տում ե զահերի անարգական վիճակը և ընթացք ե տալիս Մատոնի  
տեղեկություններով արդեն իր հոգու վրա կուտակված Կարլյան  
շառնություններին:

Այս դառնությանները հոսում են յերկու ուղղությամբ՝ նախ՝ նույնպես անարդարության, անդիսության, «նեռ»-ի դեմ։ Այնտեղ չարիքի արժանությանցն է, իսկ այստեղ գույք ավագակեները և ասպա նմանարկես չարիքի զոհի դեմ։ Այնտեղ զոհը կարև ինքն է, իսկ այստեղ՝ հայ ժողովությունը։ Բայց զոհերի դեմ «ուղղության ձեղագրականները կառուցված են բոլորովին տարբեր տարրերով։ Կարևն իրեն մեղաղքում է կուրության համար, թէ ինչո՞ւ հոր վառքերը չե ընկել և ներսություն չե ինդրել, իրը միակ միջոցը յերջանիկ ապրելու համար։ Իսկ Սարհատը հայ ժողովրդին մեղաղքում է տղիսության համար, թէ ինչո՞ւ նա զաղափար չունի ինքնապաշտպանության մասին, իրը միակ միջոցը քրդերի հարստահարությունից ազատ ապրելու համար։ «Յեթե կարիքը մարզու վարպետ ե անում, յեղանակների խստությունից պաշտպանվելու համար նա հագուստ է հնարում, գաղաններից պաշտպանվելու համար զենքեր և հնարում, ինչո՞ւ չե մտածում նա միենույն ինելքը բանացնել մարզակերպ զաղանների ձեռքում զոհ չը դառնալու համար»։ Արագիսով, հայերի գերությունը և նրանց ինչքի կողոպուտն արթնցնում են Սարհատի մտքի մեջ զարձյալ այն զաղափարները, վարսեր նախ արտահայտվեցին Խոչարա ձորում՝ ի տես ավերակ հայ զյուղերի և արյունրմա ընտանիքի, և աղա՛ հայրենի ավերակների վրա՝ մահամերձ հոր ներկայության, հետեապես դարձյալ ֆրանցի նույն պահանջը՝ պահանջով, կիրքը՝ կիրքով և ուժը՝ ուժով խորտակելու սկզբունքն է, վոր դարդինական նույն գոյության կովի տեսությամբ գունավորված՝ իրը տարբեր կառուցվածքով արտահայտություն և ներկայանում մեղ։

Բայց այս զաղափարների հանդես գալու համար ստեղծված արտաքին պայմանները գասակորված են լիութա ձորում ստեղծված արտաքին պայմանների որբենակով, ինչուն և այս զաղափարներից բղիսդ յեղակացությունը՝ ակնհայտ կերպով այնտեղի մաքերից բղիսդ յեղակացության արտահայտության ձևով։ Այնտեղ Սարհատը մի րլուրի վրայից թուփերի պաշտպանությամբ անտեսանելի, յերբ դիտում և հայ զյուղերի ալբիլը և հուսահանիքի վիճակը՝ յեղակացնում է։ «Դուք արժանի յեք ձեր վիճակին, վոր ինքներդ եք պատրաստել ձեզ համար . . . , նոր մեղաղքը չե, վոր այրում և և մորթում . . . . , ապա նա շարունակում է։ «Ով չի հասկացել կամ չի ուզում հասկանալ ապրելու պայմանները, կրանքի իրավունք չաւնի»։ Իսկ այստեղ՝ Սարհատն

ու Մատոն գտնվում են մի լուսան բարձրավանդակի վրա, Մստոյի հեռանալուց հետո՝ Սարհատը «անտեսանելի կերպով թաքչում է թիվերի մեջ», հետեւապես լուշարա ձորի արտաքին վիճակում՝ հեռվից դիտելով սարսափելի տեսարանը, հայ ժողովրդի մասին գալիք է մի յեղակացության, վորն իր իմաստով և ձեռվ նախորդի կրծատյալ կրկնությունն է։ «Այս ժողովությունն ինքն եր մեղաղքոր, վոր կյանքի պահանջները չեր համացել»։

Կարևն իր մենախոսության մեջ հայսում է, վոր, Ֆրանցի արտաքների պատճառով, ինքը դարձել և ավաղակ, մարդասովան։ Սրա հետեւողությամբ այժմ Սարհատն ևս անդրագառում է պաղակության իննդրին, հայանելով, վոր քրդերի արարքների պատճառով ինքը ևս դարձել և ավաղակ, «արյունահեղ պաղակ»։ Բայց մինչ կարևի արտահայտության մեջ նկատվում է խորշանք դեպի իր այս հարկադրյալ զրագմունքը, Սարհատը, բավականանաւով միայն ձևական հետեւողությամբ, բաժանվում է նրանից և այդ ձևի մեջ զետեղում հետեւյալ բովանդակությունը։ Նա «բոլոր ձարդերին ավաղակներ և համարում, այն զանազանությամբ միայն, վոր մեկը կոսիտ սրով և հափշտակում, մյուսը՝ խելքով, յերսորդն՝ արհեստով, չորրորդը՝ մարդասիրության և քաղաքակրթության անունով»։ Յերկու տող՝ հետո նույն միտքը կրկնում է, «Ավաղակությունը . . . մարդկանց մեջ զանազան գույներով և շատ անդամ գեղեցիկ ծրաբներով և հայտնվում։ Պու պատուիր արտաքին կեղել և կըսեանես միջուկն ավաղակություն և և ավելի վոչինչ»։ Բայց այսպիսով Սարհատը ընկնում և դարձյալ Ֆրանցի աղղեցության տակ և տարբեր արտահայտությամբ հեղհեղում և զարձյալ նրա մենախոսության մտքերը, վորոնք նույնպես գունավորված են դարվինիզմով—ավաղակությունը հակադրելով գոյության պաշտպանության գրդիչներին։ Պահանջին, կիրքին և ուժին համապատասխան կերպով հակադրելու ուսմունքին՝ Ֆրանցն անմիջապես հարում և՝ թէ հիմարներին սանձելու և ուսմիկներին վոտի տակ պահելու համար՝ մարդիկ հնարել են զանազան ընկերական գաշինքներ. —պատվավոր անուն, խիզ և այն, և այն, վորպեսզի խելոքներն ավելի լավ կյանք վարեն։ Իսկ Սարհատը՝ Ֆրանցի այս պահանջի, կիրքի և ուժի պարզապետության համաձայն կառուցած իր մտքերից անմիջապես հետո, ուրեմն Ֆրանցի մտքերի նույն հաջորդականությամբ, այժմ նրա ահա այս խելոքներին» և, վոր «ավաղակներ» և անվանում, վորոնք ընկերական գաշինքների վիխարեն հայոնվում են զեղեցիկ ծրաբն-

րով և դանագան դույներով և կամ՝ մարդասիլության և քաղաքակրթության անունով, բայց ինչո՞ւ համար — վորպեսզի հափշտակեն:

Ֆրանցը վճռում է. «Ուրեմն հառաջ, վոչ մի բանից չերկնչողը նույնչափ զորեղ է, վորչափ և նա, վորից ամենքն յերկնչում են» և կամ «Ուրեմն հառաջ և համարձակի... Յես կը տապալեմ շուրջը ամեն բան, ինչ վոր ինձ արդելում և տեր դառնալու. ինքնիշխան տեր պիտի դառնամ, վորպեսզի բանությամբ ձեռք բերեմ այն բոլորը, ինչ վոր չեմ ընդունակ սիրելությամբ ստանալու»: Իսկ Սարհատն «ինքն ել ավաղակ եր, մի արյունահեղ և սոսկալի ավաղակ... Հայաստանի լեռների վրա, ուր յերկու հակառակ ծայրերի վրա կանգնած են յերկու հակառակ ազդություններ, մեկը վերջին ստրկության հասած հայը, մյուսը վերջին բարբարության հասած մահմեղականը, — և յիթե ստրուկների կողմից բողոք և բարձրանում դեպի բռնակալությունը, դա բնականաբար պիտի ընդուներ վոչ այլ կերպարանք, բայց միայն Սարհատի ավաղակային կերպարանքը»:

Հետեւապես, ինչպես Ֆրանցը, նույնպես և Սարհատը չեն ցանկացել գալու այն «հիմարների» շարքը, և ինչպես Ֆրանցը վճռել ե տապալել այն ամենը, ինչ կաշկանդում ե իր կամքը, նույնպես և Սարհատը վճռել ե ծառանալ իրեն ստրկացնող բարբարոսության և բռնակալության դեմ՝ ավաղակային կերպարանքով:

Մինչ այդ Մատոն վերագանում ե և հաղորդում ե, թե կարտիանն այս յերեկո Սախկալ-Դուտան կիրճից պիտի անցնի և պիտի գեւերե Հասովիստանի հովտում: Ապա Սարհատը հայտնում ե, վոր ինքը մի պայմանագրյալ վայրում ընկերներ ունի և Մատոյին հանձնաբարում ե գնալ նրանց մոտ և պատվիրել, վոր այս յերեկո Սախկալ-Դուտան կիրճում կարավանի առջեր կտրեն և հայ դերիներն ազատեն: Մատոն կրկին հեռանում ե:

## Դ.

Մեզ զարմացնում ե Սարհատի արսպիսի ընկերների անակնկալ գոյությունը. — ի՞նչ մարդիկ են սրանք և ո՞ւր ելին մինչեւ այժմ, հարցնում ենք:

Բայց ահա վեպի հաջորդ է. գլուխը, յերբ բացարում ե այս Հարցերը, մենք իսկույն ճանաչում ենք մեր մռացված ծառությունը, — դրանք Կարլ Մոորի ընկերներն են, նրա ավաղակ-

ները, միայն՝ տարբեր անունով, տարբեր հարուստով և տարբեր հիմնական նպատակներով: Սարհատի խումբը, կարդի խումբի նման, կազմված և տարբեր տեղերից յեկըռներով և տարբեր աստիճաններով ու դիբրի մարդկանցով: Կարլի համբարքը հրապուրել և մինչեւ անդամ «Ազնվամիս կարիքներին... և այդ ազնիվ մարդիկ չեն ամաչում ծառայել նրան», իսկ Սարհատի խմբին իրերը մի քահանա Խարբերդի քրղախոս հայերից և մի վարժապետ Կ. Պոլսից: Ինչպես Կարլի, նույնպես և Սարհատի խմբի հիմնական անդամների քահանկի մասին տեղեկություն և հազորդվում: Յերկու խումբն ել հետապնդում և վորոշ նպատակները. Կարլի խմբի նպատակը՝ սոցիալ-գուստակարդային ե, նա հարձակվում և «Կոմսերի, հարուստ կալվածատերերի, մինհարանների, պարոնների և վոսկենամուկ փուն կենդանիների վրա», իսկ Սարհատի խմբի նպատակը՝ ազգայնական ե, նա «Թի՛ ինքը և թե՛ իր խումբն անոնապար զարկվում եր քրդերի հետ և անդադար վորեցեց թշնամական հաշիվ ելին վերջացնում այս և այն մահմեդական ցեղերի հետ»: Բայց ի՞նչ պատճառով Սարհատի խումբն այսպես տարածամ կերպով և հանդես գալիս: — Խումբը և խմբապետը Դիարբեր կազմեած գանված ժամանակ՝ լսում են քրդերի կատաղի շարժումի մասին և շտագում են գեսի Ազբակի, բայց դեռ տեղ հասած՝ խմբապետը բաժանվում է, վորոշ առաքելությամբ մեկնում է վան, այնակեղից վերապարձին՝ մեզ հանդիպեց Խոչարա ձորում, վորտեղից մենք արդեն հետեւում ենք նրաքայլերին մինչեւ արտեղ, իսկ այժմ՝ Մատոյի միջոցով դարձյալ պիտի միանա իր խմբին՝ Սախկալ-Դուտան կիրճում, ուր պիտի կատարվի նրանց համբարձուր կոխվը քրդերի հետ՝ մեր ներկայության:

Բայց այժմ միայն պարզվում է մի այլ հանդամանք. — Սարհատի և Մատոյի խոսակցության ժամանակ կարավանի հանդես գալով «Ավագակներ»-ի գեւզերի նշած ընթացքից չեղվելը մի հարմար միջոց եր վոչ միայն Սարհատի մեջ թանձրացած կարույրան արամագրություններին ընթացք տալու, այլ մանավանդ վերագանալու Կարլի ուղղմական ընդունակությունը և նրա իմրի հերոսությունը բնորոշող բոհեմյան անտառների հոչակավոր կը վիճին և նրա հետեւղությամբ ստեղծելու մի կոխվ քրդերի հետ, ուր նույնպես պիտի փայլի Սարհատի ուղղմական ընդունակությունը և նրա իմրի անվեհերությունը:

Բայց վորովհետեւ այնտեղ կովից անմիջապես տառաջ և նկարված Կարլի հողերանության մի ուշագրավ վայրկյանը, պետք է

տեսնված, վոր այսոնի՝ Սարհատը ևս կովից առաջ ունենա նույն հոգեբանական վիճակը, ահա թե ինչպես:

Բոհեմյան անտառների կովից անմիջապես առաջ, ուրեմն, Քոլերի աղաւաման համար ձեռնարկած ծայրահեղ միջոցների հետեւ քովի ինչպես հաղորդում և Շուֆանուրեն, սպանվել են որորոցի յերեխաներ, ճանձեր քովի պատավիներ, բժշկի հետեւ ճվճիգացող չիփանդներ, ծննդական կնիկներ, մատաղահաս տիկիններ, թշվառ քանաստեղներ և այլն, և այլն: Այս մասին յերբ լսում և հրոսակետը՝ հուզվում է. «...մ' չ, թյու, ամոթ մանկասպան, կինասպան, չիվանդասպան չարերին... ի՞նչպես ճնշում և ինձ այս վոճիրը, սա թունալորեց կյանքիս ամենասիրուն գործը... Ահա կանդնած եմ ամենատեսի աչքի առջև իրեւ ամոթապարտ ու ծաղր յեղած մի մանուկ, վոր հանդինեցավ խաղալ Արամագդի մկունդի հետ և թղուներ ջարդուեց, մինչդեռ պարտական եր տիտաններ տապալել»:

Մատոյից բաժանվելուց հետո, դեպի Սախկալ-Դուտան տանող ճանապարհին, ուրեմն նույնպես կովից անմիջապես առաջ նույն է. գլխում, հետեւ այն և հաղորդվում Սարհատի հոգեկան վիճակի մասին. — «Եա շատ լավ եր հասկանում իր վիճակի բոլոր վատաքարությունը, նա ինքը սարսափում եր իր արյունոտ ձեռքերից, թեև այն ձեռքերը միշտ թշվառների պաշտպան են յեղել և յերբեք չեն թափել մի անմեղ արյուն. — բայց նրա անձնասիրությունը վիրավորվում էր, աեսնելով, վոր ինքն իր բոլոր արժանավորություններով ստիպված եր լինել մի ավաղակային հրոսակի գլխավոր, մինչդեռ կարող եր ամբողջ զունդերի հրամայել և իր հայրենիքը մաքրել ավաղակներից...»:

Յեթե Սարհատը լավ և հասկանում իր վիճակի ծանրությունը և սարսափում ե իր արյունոտ ձեռքերից, այդպիսով նա մասնակցում է Կարլի հոգեկան ընդհանուր դառնության, վոր արդյունք և գործված վոճիրին: Յեթե հարվատակացնում է, թե այդ ձեռքերը միշտ թշվառներին պաշտպան են յեղել և յերբեք չեն թափել անմեղ արյուն, ակնհայտ կերպով իր և Կարլի ներկա վոճապարտ վիճակի միջն մի տարբերություն և զծում: Յեթե նա վիրավորանք և զգում այն պատճառով, վոր իր արժանավորություններով չատ չնչին բաներ և կատարում — ավաղակային հրոսակի գլխավոր և, փոխանակ գնդերի հրամայելու և իր հայրենիքն ավաղակներից մաքրելու, ապա նա իրական արտահայտություն և տալիս կարլի վիրավորված արժանապատվության հռետորական ձեռվածք արտահայտված պատճառներին, այսինքն՝ թե թղուներ և

ջաբարուել, փոխանակ տիտաններ տապալելու: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Կարլի հոգեկան աշխարհը հանդիսացել է այն տիպարը, վորի հետեւ զուգությամբ. ընդհանրապես համագրությամբ, մասսամբ և հակառակությամբ — Սարհատը կառուցել է իր հողեկան աշխարհը\*:

Կարլի հոգեկան տրամադրության արտահայտությունն հաղիկ վերջ գտած, ալաղուկները հայտնում են, թե պոհեմական ձիավորներով շրջապատված են. —

Շվայցեր. — ... Դե՛մ, ուրախացիր, Քոլեր, արդեն վաղուց ուզում եյի ջարդուել այդ անշահ վարձկաններին... արդյոք ամենքը այսուհետ ենք, մեր վառողը կրավե»:

Բացինան. — Վառող, ինչքան կամենաս, բայց մեր թիվը միայն վաթսուն ե, ուրեմն հաղիկ թե մեկը նրանց քանի դեմ:

Շվայցեր. — Այդիի լավ: Նրանց հիսունն իմ բույթիս յեղունգի դեմ... Յեղբայրնե՛ր, յեղբայրնե՛ր, վատանգ չկա, անհոգ յեղեք:

Մոռը. — Այժմ ստիպված ենք հուսահատների պես մաքառել, տղայք, ժամանակ և, մենք կորած ենք, յեթե կատաղի վարպետների նման չկայինք:

Շվայցեր. — Այնպիս շամփրում դաշուններ նրանց փորբ մեջ, վոր աղեկները կանգունի չափ գուրս թափի:

Մոռը. — Այժմ թող ձեղնից մի քանիսը ծառերի վրա մաղլցեն, թամբ թափուտում պահպախին և կրակ տան նրանց գործանի միջից, խոկ մենք դեկրի նման նրանց կողերի վրա կը հարձակվինք... Թող ձեղնից ամեն մեկը սուր-սուր սուրե անտառում, վաղվե, աղաղակե, վոր մեր թիվն ավելի ահեղ յերենա... Մենք յերեք՝ Քոլերը, Շվայցերն ու յես մարտի խոան մեջ կը կռվինք:

\* Սարհատը միայն մի կետում և չեղվում Կարլի մաքերից. բայց այդ չեղվումը բավական է, վոր նա ընկնի կատարյալ հակառակության մեջ: — Յեթե նուարը բություն և դնում իր և Կարլի միջն, ոնդելով՝ թե իր ձեռքերը չեն թափել վոչ մի անմեղ արյուն, ապա ինչո՞ւ յե սարսափում իր արյունոտ ձեռքերից, չե՞ վոր այդ ձեռքերը մեղավոր արյուն թափելու համար հանդես յեկան: Յեզ կամ ինչո՞ւ յե շարունակում խոսել անձնասիրության վիրավորանքի մասին այն պատճառով, վոր իր հայրենիքն ավաղակներից մաքրելու համար միայն մի ավաղակային հրոսակի գլխավոր և կ վոչ ամբողջ դնդերի հրամանատար. չե՞ վոր այդպիսով ափսոսնք և հայտնում, վոր գունդերի հրամատար չլինելով, զրկված և հարավորությունից հայրենիքն ավաղակներից մաքրելու, այսինքն աղելի շատ մեղավոր արյուն թափելու:

Նվայցեր.—Հիանալի յեւ, ոքանչելի, այնպէս չըմացնենք  
նրանց, վոր չիմանան, թե վորուղից և ազտակ տեղում դնչե-  
րին...

Սարհատն ու իր խուժը տարբեր ճանապարհներով առա հան-  
դիպում են միմյանց Սախել-Դուտանում։ Այնուղ և հասել և կա-  
րավանը։

Սարհատն ասում է... Այսոր մի գեղեցիկ դեպք առիթ կառ  
ձեղ դործ դնել ձեր քաջությունը և զրա համար կանչեցի ձեղ։  
Մենք տառնեչորս հոգի դործ պետք և ունենանք ավելի քան հի-  
սուն հոգի վայրենի Հարդոշիների հետ։

— Մստոն բոլորը պատմել ե մեկ, —պատասխանեց քահանան,  
վորին այժմ կոչում ելին Գալի-Բարս։ — Այս խաչով (նա ցույց  
տվեց իր սուրբը) Հարդոշիների գլխին մի լալ «պահպանիչ» կը կար-  
դամ։

— Գեղքը, իրավ, գեղեցիկ և, այս կիրճի մեջ մի դիմանալի  
խաղ կունենանք Հարդոշիների հետ, —ոսաց վորեորդված վարժա-  
պեալ, վորին այժմ կոչում ելին Քիթար-Գալիիսի։

— Հարդոշիների հետ լալ և դործ ունենալ նեղ ծակերում,  
այդ անիծվածներն իրանց բերաներից ել են կրակ փչում, —ոսաց  
Սառունցի կարոն։

— Այդ պատարկախոսություններով ժամանակ ենք կորցնում,  
Հարդոշիները հեշտ ուտելու պատառ չեն, —նկատեց զիյթունցի  
Ներսոն։

— Իրավ, ժամանակը թանգ և մեկ, —խոսեց Սարհատը։ Զեղ-  
նից ամեն մեկը թագնված կը լինի քարաժայի հետևում, և այն-  
քան կապասե, մինչև ամբողջ կարավանը կը լցվի կիրճի մեջ, այն  
ժամանակ դուք պետք ե բաժանվեք յերկու մասն։ յովին հոգի պետք  
ե փակե կիրճի մուտքը, իսկ յովին հոգի նրա յերը։ Մենք տառն-  
եչորս հոգի ենք. յես կտամ Հարձակողական նշանը բազեցի ձայ-  
նով... Հարձակումները միշտ մի տեղից կամ մի կողմից չպետք  
ե լինեն, չուտ-չուտ փոխեցեք ձերքը, վոր թշնամին կարծե,  
թե բարձաթիվ եք։

Կովից անմիջապես առաջ յերկու ռազմական խորհրդակցության  
սերտ նմանությունն ակնհայտ ե նմանություն՝ ըստ ձեւի յերկուսն  
ել համաձեպ, հոտնկայս, տարբեր ավազաների տարբեր կարծիք-  
ների անմիջական մեջբերում։ Եմանություն՝ ըստ բովանդակու-  
թյան՝ յերկուսի մեջ ել հիշեցում թշնամու թվական առավելու-  
թյան, յերկուսի մեջ ել ինքնազմահություն և թշնամու քաջու-

թյան թերապնահատում, բայց և՛ դնահատում։ — Դալի-Բարսն և  
Քիթար-Գալիիսին յուրացրել են Շվայցերի հօխորատադին և ար-  
համարհական վերաբերմունքը դեպի թշնամին, իսկ Սասունցի  
կարոյի և Զեյթունցի Ներսոյի գնահատականները թշնամու ուժի  
նկատմամբ՝ անշուշտ արածաղբությանց արձագանգներն են այն  
ավազաների, վարոնց խրախուսելու մասնավոր պետք և տեսնում  
Շվայցերը։ Սարհատը կատարում է Բացմանի դերը, յերբ հակա-  
ռակիրու ուժերի քանակն և համեմատում, այլապես նա ընդորի-  
նակում և կարմի հրամանները, մասամբ ընդլայնված՝ Արույրանի  
Ազատու միջոցավ, ինչպես ստորև պիտի տեսնենք, մասամբ և  
նույնությամբ՝ անմիջականորեն։ — Կարլը հրամայում է. — «Թող  
ձեղնից ամեն մեկը սուր-սուր սուրէ անտառում, վազվե, աղա-  
ղակե, վոր մեր թիվին ավելի ուժեղ յերենա»։ Սուլելու պարտա-  
կանությունը Սարհատն իրեն վերապահելով, հրամայում է.  
«Հարձակումները միշտ մի տեղից կտմ մի կողմից չպետք ե լինեն,  
չուտ-չուտ փոխեցեք ձեր դիրքը, վոր թշնամին կարծե թե բար-  
ձաթիվ եք»։

Կորիվն ինքնին «Ավազակներ»-ի մեջ ներկայացված չե, բայց  
«Զալաւեդգին»-ի մեջ նկարագրվում է, և այդպիսով Սարհատի  
խումբը մի առ ժամանակ մտնում է «Լերք Հայաստանի»-ի աղե-  
ցության ըլջանը։

Այդ աղեցությունը հանդես և գտնիս ավելի կանուխ։ — Սար-  
հատի և Մստոյի խոսակցության ժամանակ, հայ գերիներով և ա-  
վարով անցնող կարավանը, իր բոլոր հանգամանքներով, նազի  
խանի և Ոքուզ աղայի վարած հայ գերիների կարավան ե, վորը  
Գարսից գալով՝ հայոնվում է Անիի ձորում և զբագլում է բուրզի  
վրա հանդսացող Աղասու ուշագրաւթյունը։ Ինչպես այնաեղ կա-  
րավանն առաջնորդում է զեպի Անիի կոիները, նույնպես ել  
այստեղ առաջնորդում է զեպի Սախել-Դուտանի կոիվը։

Հավանորեն Բաֆֆին զիտակցել ե, վոր Արովյանն ստեղծել  
ե կարավանը և կամ սպավել ե նրա զոյտությունից, վորպեսզի Ա-  
զատուն և ընկերներին հանդես բերե Անիում՝ Կարլի և հետեւող-  
ների բոհեմյան կոիների դերում, թեպեակ հասրավոր ե նույն-  
պես, վոր սուանց այս գիտակցության, կարավանն ու Անիի  
կոիներն անկախարար նրա ուշագրաւթյունը հրավիրած լինեն  
զեպի բոհեմյու կոիվը։ Համենայն զեպս սպավելով կարավանից՝  
նա իր ուշագրաւթյունը կենարունացրեց թե՛ բոհեմյան հերոս Կարլի  
վրա և թե՛ անուշաղիր չմողեց Անիի հերոս Աղասուն, և Կարլից

Ընդլայնված ձեռվ սրան փոխանցված հրամանատարական որենքներին ժառանգորդ կարգեց Սարհատին:

Խանի վրա Հարձակվելու և գերիներն աղատելու համար՝ Աղասու կարգադրությամբ նրա ընկերներից «Հինգը մեկ կողմից դնաց, Հինգը՝ մյուսից. Են մնացած տասը հոգին ել ենակես պետք ե գային, զոր բոլորին մեջ անելին, թրի առաջ ընկածը կոտարելին, սաղ բոնածը յեսիր անելին ու վորքան կարելին ա հայերին արձակելին... Եսպես՝ բոլորը քաշնըսըս մարդ պետք և հինգ հարիր մարդի հախիցը դային: Լսողը չի՞ զարմանա, թե ինչպես կարելի ա, քաջությունը սրտիցն ա կախված, մեկ ել վոր ինչ կուզե թշնամին շատ ըլլի, հանկարծ վրա տալիս, են ել դիշը, ի՞նչ ա խմանում դիմացի կովողի շատությունն ու քաջությունը: Սրանից գյուման, Աղասին պատվել եր տվել, զոր հայերեն յա թուրքերեն հեջ չխոսան, քրդերեն հարայ տան, հավար կանչեն: Աղասին իր ընկերների կեսը վրին՝ ձորի ճամփեն եր կտրել, մյուս կեսը հարիրից ավելի հայ... ձորի յետելը..., վորը միջիցը, վորը ձորի քամակիցն ու յետերիցն են կարկուտն ածեցին թշնամու գլխին, վոր աստված վոչ շանց տա... Ինչ կոտորվել ելին, կոտորվել, ինչ չե՛ մնացել ձորի միջումն վոչխարի պես չոպանը կորցրած, կանգնած. ընչանք եսպես սրահեցին մեր տղերքը, մինչեւ ձեքը բացվեց: Իսկ յերբ քիչ հետո Հասան-խանն ե իր «Պոչունով» Ղարսից վերադառնում, Աղասին նույնությամբ կրկնում ե իր կարգադրությունը. «Զորքը կես արեց, կեսը ավեց կարոյի ձեռքը... կեսը ինքը ձեռի տակն առավ... Եսպես ելին պայման կապել իրար միջում, վոր թե Հասան-խանը ձորը մըտնի, ենքան թողան, վոր բոլոր զոշունի վոռքը կարվի, յետո շենլիկ անեն... Ենքան դուրս չի դան, մինչև բոլոր նրանց գլխին համարվեն, յետո կեսը ձորի մեկ կողմիցը, կեսը մյուսիցը կովի չամանակը վրա տան, վոր ենակես չչկացնեն թշնամուն, վոր փախչելուց գյուման ել ուրիշ ճար չգտնեն...»: Իսկ յերբ թշնամին հալաքվում ե ձորի մեջ, կրկնում ե նույն դեպքը. «Թվանքները բերդիցը ճոռացին, սար ու ձոր թնդացին... Զիաները թող ու զանթաղա կտրեցին... Ղղբաշի շատը անդամակ, բորիկ ընկավ ձորնը վեր»:

Կարլի կոխիը տեղի ունեցավ անտառում, իսկ Աղասու, ինչպես և Սարհատի կոխիները՝ ձորում: Աղասին Կարլի հրամանները համաձայնեցրել ե իր տեղադրական պայմաններին, Սարհատն ստիպված է վորոշ տարածություն քայլ առ քայլ նրան հետեւ:

«Զեղանից ամեն մեկը թաղնված կը լինի քարաժայոի յետեւում, — և այնքան կսպասի, մինչեւ ամբողջ կարավանը կը լցվի կիրճի մեջ, այն ժամանակ դուք պետք ե բաժանվեք յերկու մասի, յոթն հողի պետք ե փակե կիրճի մուտքը, իսկ յոթն հոգի նրա յելքը...»: Ապա կրկնում ե նույնակես Աղասու պատվերը. «Խոսնեց միշտ ուսվանդությունի բարբառով, վորովհետեւ ուսվանդները հարդոշների հետ մի թշնամի ցեղ են, թող նրանք կարծեն՝ թե զործ ունեն ուսվանդությունի հետ»: Իսկ յերբ բոլոր պայմանները պատրաստ են և թրշնամին արդեն ձորումն ե, այստեղ ևս կրկնվում ե նույն գեղքը. «Զանազան տեղերից լամիլ յեղան հրացանների վորոտմունքները: Կիրճի մեջ սկսվեց մի աղմակալի իրարանցում և բարձրացավ խուլ դորդրուն: Հարդոշները կատագած զարանների նման սկսեցին այս կողմ և այն կողմ վաղմղել, բայց ամեն տեղ հանդիպում ելին վորոտացող կրակների...»:

Աղասու աղատած գերիները վերակառնում են Ղարս, իսկ Սարհատի աղատած գերիները՝ Դալլ-Բարայի և այլ չորս ընկերների առաջնորդությամբ, փոխադրվում են Սարհատ: Այսուղե ևս Աղասու մի այլ վարմունքն ե որինակ հանդիսանում: Բայց այս մասին հաջորդ հատվածում:

## Ե.

Վեպի Ը. գլխի բովանդակությունը չի ձուլվում Սարհատի գործունեյության հետ: Բարդուղիմենս առաքյալի վանքում հանդես են գալիս Յեղիկազար վարդապետն ու Ոմար-աղան. իորդչըրդակցում են Զալալեգինին գիմադրելու մասին, բայց տեղացի հայերի յերկշոտության պատճառով գիմադրությունը տեղի չի ունենում, վորի հետեանքով բոլորը կոտորվում են:

Թ. Հատվածում Հայունվում ե նույն վանքում Սարհատն իր խմբով, վորով միասնական ամբողջապես յենթարկվում և Աղասու աղգեցության:

Աղասին գիշեր ժամանակ մտնում ե Անի. «Հանդստարանի ձեն եր գալիս, վոր մեր ճամփորդքը գիշերվա կեսին ես տեղ հասան... Հենց իմացան թե մեկ մեռելատուն կամ գերեզմանատուն ընկան...»: Աղասին ուզում ե այստեղ իր շրջապատն ուսումնասիրել. «...Հենց մի քիչ հեռացան թե չե, յեկեղեցու դոնից կրակի լիսն ընկավ Աղասու աչքը... Թուշ կրակի վրա զնաց... Տասը բուրդ յեկեղեցու մեջտեղը կրակ ելին արել, չորս կողմը նստել, խորոված ելին ահում, շամփրերով բերանները քաշում-ուտում,

խնդում . . .»: Աղասին և իր ընկերները հարձակվում են նրանց վրա. «... Քրտերի ասողը թեքվեցավ, ութը կոտորվել էյին, յերկուսը մնացել յարալու ընկած. սրանց ել կապեցին մեկ ձիու բնի վրա . . .»: Այս կոտորածից հետո քաջերը նայում են իրենց շուրջը և հայտնաբերում են՝ «Աղջիկ ասես, աղա, հարսը, յերեխա, ծծկեր, հաղար չփառով կապած տուն եյին արել, Ղարսա գեղերիցը յեսիր բերել, վոր տանեն յա Սարդարին փեշքաշ անեն, յա Ախրլցիս՝ ծախեն: Ո՞ւմ եսպես սհաթին մարդ կրանք տա, վոր նրան առաջը ծունդ չընեն, յերկրպագություն չանեն . . . Փոքր ինչ վոր դիմացան, աչքդ բարին տեսնի, քրդերի չորերն, ասպարն, ձի ռախան ու խուրդիները, վոր բաց չարին, հաղար արնի գին կար մեջըներումը, ամեն մեկին վրա հարիր թումանի զինքս, արծաթ, ու վոսկի, թող նազդ փողը: Աղասին վոչ մեկին ելա մտիկ չարեց, դրկեց ձիանը բերել տվեց, ներս քաշեց . . .»: Նույն պահին քրդերի այլ քսան ընկերներ նման ավարով և դերիներով մանում են յեկեղեցի և նույն վիճակին արժանանում: «Ելի Աղասին եր, վոր հս կատաղությանը չափ դրեց, սպանածներին դուքս ածել տվեց, ու վորը սաղ եյին, յա յարալու՝ ձեռ ու վոտ կապել տվեց ու դրադ քաշել տվեց . . . Հենց են կոտորելու ժամանակին եր Աղասին գուրս թուել . . . ու խեղճ հայ յերեխեքանց աչքերի ու ձեռների կապը իրան ձեռովը յետ արել . . . Զարմացած, մահի գուռը դնացած ու յետ յեկած հայերը, վոր աչքները բաց չարին իրանց աղատողին տեսան, ուղում եյին վոտներն արտասուրվ լվանան . . .»: Այս գերիների մեջ գտնվում ե և մի քահանա: Աղասին «առավոտուն հրամայեց, վոր ինչ ճարել են հավասար ճոթ անեն, ինքը մատն ելա մի բանի վրա չդրեց, բոլոր ընկերներին մեկ-մեկ ձեռք քրդի չոր հագցրեց, վոր շուտով չճանաչն, ամեն մեկին մեկ ձի ել բաշխեց . . . ու մյուսներին ել լալով խելիմ տեղ ել տարավ, ճամփու քցեց ու ինքն իր ընկերանցովը յետ դառավ . . .»:

Սախկալ-Դուտանի կովից անմիջապես հետո, Սարհատի խումբը մի գեշեր մտնում ե Բարդուղիմեռ առաքյալի վանքի դյուզը: «Գյուղը նույն ժամին խալար և լուռ եր, և մի ընդարձակ գերեղմանատան նման . . . Բայց մի տեղից միայն յերեսում եյին լույսի նշույլներ, դա վանքի հոկայական շինվածքն եր . . . Յեթե մի մարդ նույն ժամին մտնելու ինքը հիշյալ շինության մեջ, վորտեղից լույս եր նշմարվում, նրա աչքերի առջե ներկայանալու յեր մի այսպիսի տխուր տեսարան . . . Տաճարի մի կողմում կա-

լպած եյին ձիաներ, իսկ մյուս կողմում նստած եյին մի խումբ քրդեր, մեջտեղում վասպում եր մի ահապին խարույլ . . . Կրակի մեջ դրած եյին մի քանի շամփուրներ . . . Կրակից վոչ այնքան հետու, թեև ին ու վոտները չկանոներով կապկապած, մերկ սալահատակի վրա ընկած եյին մի քանի մարդիկ և սարսափելի խումբության մեջ սպասում եյին մի զառն ճգնաժամի . . .»: Այդ շամփուրներով քուրդերը մինչ խարանում եյին հայ գերիներին, «Հանկարծ վորոտացին ատրճանակները, և սուրբ տաճարը վառողի ծխով լցվեցավ: Սարսափը տիրեց բոլորի վրա, քրդերից մի քանիսը վորովիցան, ընկան, իսկ մյուսներին բոնեցին զորեղ բազուկներով և սկսեցին կապկապել: Սարհատի ընկերները, վորոնք «հազնված եյին քրդի հաղուստով և խոսում եյին քրդի լեզվով», իրենց գործը վերջացնելուց հետո՝ անում են քահանային և նրա ընկերներին. «Այստեղ կան սպատրաստի ձիեր, բարձեցէր ինչ վոր հավաքված ե այստեղ, վոր պետք ե քրդերը տանելին և դուք նստեցէք նրանց ձիաները, շուտով ճանապարհ ընկերք . . .»: «Քահանան իր ընկերների հետ հեռացավ: Յերկու հոգի . . . տարան նրանց ճանապարհ դնելու մինչեւ Պարսից սահմանը . . .»:

Մերի մայր յեկեղեցում և Բարդուղիմեռու առաքյալի վանքում տեղի ունեցած զեպքելքի նկարագրությունը կատարելապես նույն և, հետեւապես վորեն հիմնավորում այս մասին ավելորդ ե:

Բայց մայր յեկեղեցու զոհերի վոխադրության որինակով վանքի զոհերի փոխադրությունն առիթ ե տալիս այժմ անդրադառնալու նախորդից այս հատվածին վերապահված Սախկալ-Դուտանում աղատված գերիների տեղափոխության պարզաբանման և նկատելու, վոր այս զոհերի վոխադրությունը կատարված է նույնպես Աղասու և ընկերների վարժունքի հետեւողությամբ: Յերկու տեղամաս ել փոխադրվում են գերությունից աղատվածները, փոխադրվում են գերողների սպանությունից հետո և փոխադրվում են սահմանափակ թվով, իրը այլազգ ծպալված աղատար հրոսակների միջոցավ: Յերկու տեղամաս ել զոհերի նույն յերախտագիտական որհնությունն ե լսվում գեպի աղատարարները: Այսպիսով, Աղասու և ընկերների վարժունքն աղատված գերիների նկատմամբ որինակ և ծառայել Սարհատի և ընկերների վարժունքն ինչպես Բարդուղիմեռու առաքյալի վանքում, նույնպես և Սախկալ-Դուտանում աղատված գերիների նկատմար:

Յայց յեկեղեցում և վանքում նկարագրված դեպքերի մեջ կամիայն մեկ տարբերություն : Այստեղ թե՛ կրակը և նրա միջի շամփուրները ծառայում ելին խորոված պատրաստելու համար, իսկ այստեղ զոհերին խարանելու համար : Բայց յերբ վանքի քրդերը կոտորվում են և գերիները փոխադրվում, կրակն ու շամփուրները դարձաւ ծառայում են իրենց խկական նպատակին : Սարհատի «ընկերները կտրատում ելին ահազին վայրենի խողի մարմինը, անց ելին կացնում իրենց հրացանների սումբաների վրա և խորովում ելին», հետո «խորովածն արյունաթաթախ դուրս ելին քաշում շամփուրներից» :

Գերիների մեկնումի վայրկյանին՝ Սարհատի և քահանայի փոխանակած հարց ու սպատափանից պարզվում է, վոր վանքի գյուղացի ռես Հ-ի աղջեկը՝ Ասլին, մեր հերոսի նշանածն, ուրեմն, նույնպես գերլած և քրդերի կողմից, և ահա, մինչ զինին և խոռովածը բարձրացրել են մյուս ավաղակների տրամադրությունը՝ Սարհատը քաշված մի անկյուն, ընկդմված ե խորունկ հույզերի մեջ .

«Մոնելով վանքի տիուր կամարների ներքո՝ Սարհատի սըրտում կրկին բաց յեղան հին-հին վերքերը : Այս սրբարանը խիստ խորին հիշատակներով կապված եր նրա հոգու հետ : Այստեղ անցուցել եր նա իր մանկության ամենաթանկագին տարիները : Այստեղ հանձննել ելին նրան աղոթող արեղաների հսկողության ներքո ուսանել՝ ինչ վոր կրոնը և սուրբ գիրքը ներչնչում և մարդու մեջ, ինչ վոր հանգցնում և վառ զգացմունք, մեռցնում և հոգին, բժացնում և միտքը . . . և միայն վանքի պարիսպների մոտ մի գեղեցիկ հրեշտակ վողեսրեց նրան սրբարան հափշտակությամբ . . . նա կրկին կենդանացրեց վանական ժանտախտից մեռած սիրտը և փրկարար ձեռքով խավարից դուրս քաշեց նրան և ձգեց լույս աշխարհ» : Իսկ այժմ չկար այն հրեշտակը :

Ուրեմն Սարհատը վանքի կամարների տակ՝ գտնվում ե իր մանկության հիշատակարանների դեմ հանդիման և այդ հիշատակարանները լցնում են նրա սիրտը ելեկիական զգացումներով : Բայց նա հայրենական խրճիթի առջև նույնպես հանդիմակց այլպիսի հիշատակարանների, վորոնք նման ելեկիական հույզեր հարուցին նրա մեջ, ի՞նչ կապ կա ուրեմն այս յերկու մասերի միջեւ : Սարհատի ներկա վիճակը նախորդի փոփոխակը և շարունակությունն է, հետևապես դարձյալ կարիք արտաքին վիճակի և հոգեկան տրամադրությունների արտահայտություն : Բայց ինչո՞ւ այդ արտաքին վիճակն ու հոգեկան տրամադրություններն

այսպէս անջատ կերպով են հանդես դալիս Սարհատի մեջ : Մեր հերոսը ծրագիրեց Աղասու հետևողությամբ դիմել բարդուղիմենս առաջալի վանքը և այստեղ իր խմբով խաղալ Աղասու և ընկերների աղատաբար գերը . ահա այդ սրատաճառով Ասլիի բնակությունը փոխադրեց վանքի գյուղը, վորպեսզի հիմնավորվի իր մեկնումը գեղի այնտեղ, գեղի իր ուղևորության կետ նպատակին . այստեղ փոխադրեց և իր ուսման վայրը, վորպեսզի հիմնավորվի և իր սիրահարության անցյալը : Յեւ, ահա այժմ, յերբ մանկության հիշատակներով լի վայրի մեջ և գտնվում, ինքնաբերաբար կրկնվում և Կարլի արտաքին վիճակը, կրկնվում են և մանկության տպավորությունները : Յեվ Կարլի սիրո մոտիվը, փոխակության համար սպավորությունները : Յեվ Կարլի սիրո մոտիվը, փոխակության համար սպավորության խրճիթի առջև, ընդունակ արձիթի առջև, մանկան պահանջման արձագանդում և այստեղ՝ նրա սիրահարության վայրը :

Կարլը, թվելով այն բոլոր առարկաները և վայրերը, վորոնք կապված են իր մանկության հետ վորեւ հիշատակով, հարում ե՝ կարլած «Մանուկ հասակիս վորեւ որերը նորից են արթնանում յեղելիքս հոգու մեջ . . . Այն ժամանակ դու յերջանիկ ելիր, զվարթ ելիր, հոգու մուգու մեջ . . . Այս ժամանակ գու յույսերդ ի չվք գարձան : այս, զվարթ, իսկ այժմ, ահա բոլոր հույսերդ ի չվք գարձան : Այստեղ զու կոչված ելիր մի մեծ, մի պերճ և ամենքի հարդած մարդը լինելու, այստեղ մանկական կյանքը կրկին պիտի նորող վեր Ամալիայիդ զավակներում . . . Սակայն չար թշնամին ծուռ հայեց վրադ» :

Սարհատը հայրենական խրճիթի առջև թվելով իր մանկության հիշատակներն արթնցնող իրերը, կարլին նմանվելուց խոռոշական համար, յերջանկության մասին վորոշակի չի ակնարսական կության առթիվ, այս ժամենայն դեպ զգալ և տալիս իր թակում, բայց համենայն դեպ զգալ մեղ զգալ և տալիս իր թակում, այդ իրերի նիջոցակ զարթնող քաղցր պատկերների ընդիմության առթիվ, այսպիսով՝ անդիմադրելի յի գարձնում միշտ կորստյան առթիվ, այսպիսով՝ անդիմադրելի յի գարձնում մանկության յերջանկության մասին մեր զվարած տպակը իր մանկությունը : Իսկ այստեղ, վանքի կամարների տակ, ուր անցել վորությունը : Իսկ այստեղ, վանքի կամարների տակ, ուր, վորպես ամենահարմար և այդ մանկության մի այլ շրջանը, ուր, վորպես ամենահարմար վայրում շուտառված տարրում Drang-ի բողոքները պիտի հնչեն վանքի և վանականության դեմ, ահա, այս ձայների հետ մի ներջանքը կաղմելու համար, կարլի մանկության զարթնող յերջանիկ հույզերին հակաղլրում և զարթնումը մի շարք ապերջանիկ վորոնք տպավորվել են նրա մանուկ հոգու հիշատակությունների, վորոնք տպավորվել են նրա մանուկ հոգու

մեջ վանքի կամարների տակ : Այսուհետեւ արձագանդ դանում, ուրեմն, հայունական խրճիթի առջեղանց առնված սիրո մոտիվը, վորը թեպետև Կարլի սիրուց տարբեր բովանդակություն ունի, բայց արտահայտվելով՝ նույն եւեկիական տրամադրությամբ՝ ամբողջ հատվածը պահում է՝ այդ արտադրության ազգեցության տակ :

Մինչ Սարհատն այսպես թաղված եր անցյալի մեջ, դիսուրաժակը նրա ընկերների շրջանում ձեռքե ձեռք պառույտ եր գործում և Դալի-Բարան ու Քիթար-Դալիսին արտասանում Ելին իրենց նշանակոր բաժակաճառերը :

Դալի-Բարան իր բաժակաճառով անեծք է կարում «Հայրերին և պապերին», այն պատճառով, վոր նրանք վուխանակ զենքեր դնելով՝ խաչերի և յեկեղեցական անոթների վրա յեն սպառել իրենց հարստությունը և այդպիսով անզոր դարձել՝ ազատելու յերիթը կործանումից : Նա վերջացնում է իր բաժակաճառը՝ «Ո՛վ հայոց հին աստվածներ, ո՛վ Անահիտ, ո՛վ Վահագն, ո՛վ Հայկ, նվիրում եմ այս բաժակը ձեր սուրբ հիշատակին, դուք վրկեցեք մեզ» :

Քիթար-Դալիսին իր բաժակաճառով հետևումէ Դալի-Բարայի վոճին .—

«Խմում եմ այս բաժակն առանց նվիրելու ձեզ, ո՛վ գիր և դպրություն, վորովհետև զուք չտվիք մեզ այն, ինչ վոր պահանջում է կյանքը և իրական աշխարհը : Դուք լցրիք մեր գլուխը ունայն, վերացական ցնորդներով : Դուք չծանոթացրիք մեզ մարդկային պահանջների հետ և չտվիք այն՝ վոր պետք եր ապրելու և հանգիստ ու բախտալոր ապրելու համար : Դուք ավելի զարդացրիք մեր մեջ սև նախալաշարմունքը և փակեցիք մեր աչքերը՝ լույսը և ճշմարտությունը տեսնելու համար : Դուք մեղանից դիակներ պատրաստեցիք, վորոնց մեջ մեռած է ամեն մարդկային բարձր և վսեմ զգացմունք : Դուք ավելի սինդացրիք մեր սորկության շղթաները և վարժեցրիք տանել բունության ծանր և անպատիվ լուծը : Ձեզ ենք պարտական, ո՛վ գիր ու գլուխություն, մեր այժմյան դժբախտություններով : Դուք չտվիք մեզ առողջ միաք և առողջ պաղապար և զրկելով մեզ ձիւտ և իրական դիտությունից՝ զրկեցիք և կյանքից . . . Ուրեմն, թող անհետի՛ մեր մամուլը, վոր իր մրով ավելի մրուեց մեր սիրուը, միաքը և հոգին . . . և թող կեցցեն այն դրիչները, վոր նոր հոգի կներչնչեն մեզ և

\*) франц меринг мир. лит. и пр. (եջ 53)

կը նորոգեն մեր սպառված ուժերը և կը ծանոթացնեն կյանքի իրական պետքերի հետ և կը պատրաստեն մեզ մարդ լինել, մարդկային բոլոր կատարելություններով» :

Յերկու ալայտակների այս գաղափարների տարորինակության առեղջածն ինքնին կլուծվի, յեր պահի գերմանական Sturm und Drang-ի լույսի տակ, յեր համեմատվի կոկական Stürmer և Drängr Կարլ Մոռըի մտքերի հետ :—

Վուտիկանական հետապնդումից ազատվելու համար, Կարլն իր խմբով վախել և լայպցիկոց և գտնվում է Սաքսոնիայի սահմանի վրա՝ մի գինետան մեջ : Գինու բաժակն առաջին՝ նա խոսում է Շոլիկելբերկի հետ, ավելի ձիւտը՝ մենախոսում է, և իր բողոքն ու զայրությն և արտահայտում ժամանակակից գրականության դատարկաբանության, սերունդի փոքրության և հասարակական կարգերի անդամանության դեմ, նա այս բոլորին հակադրում է հին գարերը՝ իրենց դյուցագներով և սոհղծագործական ուժի արդյունքներով : Նրա ըմբռոս վողին բավական ընդլայնված կերպով և արտահայտվում, վորի հիմնական մտքերն ամփոփած ենք գտնում հետեւյալ սողերի մեջ . «Զզլում եմ այս թուղթ մըսող զարուց, յեր Պլուտարքիս մեջ յերեւլի արանց վարքն եմ կարգում . . .» : Յեվ անխնաւ լուտանքներ չուայլելով ներկա գալու գաճաճներին, և նրանց հակագրելով հին գարերի զյուցազներն ու հետառները՝ Պրոմեթեոս, Հերակլես, Մեծն Աղեքսանդր, Զաննիբալ, Սկիափոն, շարունակում ե . «Այլանդակ որենքներով կաշկանդում են առողջ բնությունը . . . Պահանջում են, վոր մարմինս կապերով պրկեմ և կամքս որենքներով կաշկանդեմ . որենքը կրիայի քայլեր և անել տալիս այն մարդուն, վոր կարող եր թուշել արծվի պես . . . Սպառված է այս գարու յերիկամունքի զորությունը և այժմ գարեջրի մրուր և հարկամոր, վորպեսզի մարդկանց ծնունդը չառունակվի» :

Կարլ Մոռըի արտահայտած այս մտքերը գերմանական Stürmer և Drang-ի գաղափարներն են, նրանց մեջ «բորբոքվում և վառվում և լուսավորության դարս բուրժուազիայի հեղափոխական վոզմեորությունը, վորը փորձում է խորակել նեխած Փեղամիզմի շղթաները» : Իսկ այս յերկու հայտ ավագակների արտահայտություններով՝ գերմանականին հակագրվում է հայրական բուրժուազիայի Sturm և Drang-ի գաղափարները : Այս գաղափարների հիմնական անդենցը հայ բարժուազիայի աղջանական դատի, քրդի և հայի վոլոհարաբերության խնդրի լուծման

մէջ վանքի կամարների տակ : Այսուղ և արձագանդ գտնում, ուրեմն, հայրենական խրճիթի առջեւ զանց առնված սիրո մոտիվը, վորը թեպետե կարլի սիրուց տարբեր բովանդակություն ունի, բայց արտահարովելով նույն եւնկիական տրամադրությամբ՝ ամբողջ հատվածը պահում եւ այդ տրամադրության աղբեցության տակ :

Մինչ Սարհատն այսպես թաղված եր անցյալի մեջ, դինու բաժակը նրա ընկերների շրջանում ձեռքե ձեռք պառույտ եր դում և Դալի-Բաբան ու Քիթար-Դալիսին արտասանում Ելին իրենց նշանակոր բաժակածառերը :

Դալի-Բաբան իր բաժակածառով անեծք և կարդում «Հայրերին և պատկերին», այն պատճառով, վոր նրանք փոխանակ զենքեր դնելու՝ խաչերի և յեկեղեցական անոթների վրա յեն սպառել իրենց հարստությունը և այդպիսով անզոր դարձել՝ աղատելու յերկիրը կործանումից : Նա վերջացնում է իր բաժակածառը՝ «Ո՞վ հայոց հին աստվածներ, ո՞վ Անահիտ, ո՞վ Վահագն, ո՞վ Հայկ, նվիրում եմ այս բաժակը ձեր սուրբ հիշատակին, դուք փրկեցեք մեղ» :

Քիթար-Դալիսին իր բաժակածառով հետևումէ Դալի-Բաբայի վոճին . . .

«Խմում եմ այս բաժակն առանց նվիրելու ձեղ, ո՞վ գիր և դպրություն, վորովհետե դուք չտվիք մեղ այն, ինչ վոր պահանջում է կյանքը և իրական աշխարհը : Դուք լցրիք մեր քլորիը ունայն, վերացական ցնորդներով : Դուք չծանոթացրիք մեղ մարդկային պահանջների հետ և չտվիք այն՝ վոր պետք եր ապրելու և հանդիսա ու բախտավոր ապրելու համար : Դուք մվելիք դարդացրիք մեջ սև նախապահարմունքը և փակեցիք մեր աչքերը՝ լույսը և ճշմարտությունը տեսնելու համար : Դուք մեղանից դիակներ պատրաստեցիք, վորոնց մեջ մեռած և ամեն մարդկային բարձր և վեմ դպացմունք : Դուք պվելիք պնդացրիք մեր սորկության շղթաները և վարժեցրիք տանել բոնությունը : Զեղ ենք պարտական, ո՞վ գիր ու դպրություն, մեր այժմյան դժբախտություններով : Դուք չտվիք մեղ առողջ միտք և առողջ գաղափար և զրկելով մեղ ձիւտ և իրական դիտությունը՝ դրկեցիք և կյանքից . . . Ուրեմն, թող անհծովի մեր մամուլը, վոր իր մրով ավելի մրուեց մեր սիրու, միտքը և հողին . . . և թող կեցցեն այն դրիչները, վոր նոր հողի կներշնչեն մեղ և

\* ) франц. мериинг мибр. лит. и пр. (48 53)

կը նորոգեն մեր սպառված ուժերը և կը ծանոթացնեն կյանքի իրական պետքերի հետ և կը պատրաստեն մեզ մարդ լինել, մարդկային բոլոր կատարելություններով» :

Յերկու աշակերդների այս գաղափարների տարրորինակության առեղծվածն ինքնին կլուծվի, յերբ պահպի գերմանական Sturm und Drang-ի լույսի տակ, յերբ համեմատվի իսկական Stürmer und Drängr կարլ Մոորի մտքերի հետ —

Վոստիկանական հետապնդումից աղատվելու համար, կարլն իր խմբով փախել և կայսցիկից և գտնվում է Սաքսոնիայի սահմանի վրա՝ մի զինեատան մեջ : Գինու բաժակն առաջին՝ նա խոսում է Շպիկելբերի հետ, ավելի ձիւտը՝ մենախոսում է, և իր բողոքն ու զայրութիւն և արտահայտում ժամանակակից գրականության դասարակարանության, սերունդի փոքրության և հասարակական կարգերի անդնականության դեմ, նա այս բոլորին հակագրում է հին գարերը՝ իրենց դյուցալներով և սեղծագործական ուժի արդյունքներով : Նրա ըմբռոս վոզին բավական ընդլայնված կերպով երաժշտական արտահայտվում, վորի հիմնական մաքերն ամփոփված ենք գտնում հետեւյալ սովելիք մեջ : «Զվլում եմ այս թուղթ մրուող գարուց, յերբ Պլուտարքիս մեջ յերեւելի տրանց վարքն եմ կարգում . . .» : Յեկ անինաւ լուսանեներ չույցելով ներկա գալու գածածներին, և նրանց հակագրելով հին գարերի դյուցալներն ու հետոսները՝ Պրոմեթեոս, Հերակլիս, Մեծն Ազերսանդը, Հաննիբալ, Սկիփոն, չարունակում ե . . . «Այլանդակ որենքներով կազչանդում են առողջ բնությունն . . . Պահանջում են, վոր մարմինս կապերով պրկեմ և կամքս որենքներով կազչանդեմ . . . որենքը կրիայի քայլեր և անել տալիս այն մարդուն, վոր կարող եր թոչել արծվի պես . . . Սպառված և այս գարու յերիկամունքի գորությունը և այժմ գարեջրի մրուր և հարկամուր, վորպեսզի մարդկանց ծնունդը չարտահայտված է առունելի կամական դատի, քրդի և հայի վոխհարաբերության խնդրի լուծման

Կարլ Մոորի արտահայտած այս մտքերը գերմանական Sturm und Drang-ի գաղափարներն են, նրանց մեջ «քորբռքում և վառվում և լուսավորության դարսւ բուրժուազիայի հեղափոխական վոզենրությունը, վորը փորձում և խորակել նեխված Փեղամեղմի շղթաները» : Իսկ այս յերկու հայտ ավաղակների արտահայտություններով՝ գերմանականին հակագրվում է հայկական բուրժուազիայի Sturm und Drang-ի գաղափարները : Այս գաղափարների հիմնական տենդենցը հայ բարժուազիայի աղջայնական դատի, քրդի և հայի վոխհարաբերության խնդրի լուծման

Հետ ե կապված, բայց ներկա դեպքում նրանց մեջ բորբռվում են բողոքն ու ընդլզումն ընդդեմ հայ յեկեղեցու և նրա պաշտպան պահպանողական մամուլի, իբր բուրժուազիայի հիշյալ գատի ծրադերը չեղոքացնող գաղափարախոսական հակառակորդ ուժի:

Սակայն այդ ավաղակների ճառերի հիմնական գաղափարներն այս ձեռվ իրենց դարու և միջավայրի շարժիչ հասարակական ուժերի արտահայտությունը լինելով հանդերձ, այնուամենայնիվ հայ ավաղակների մտքերի ձեւակերպման և թանձրացյալ արտահայտությունների մեջ նկատվում ե Կարլի մտքերի արտահայտությունը:

Դավթաբան հետեւում ե Կարլին իր վոգու ըմբռատ և բողոքող հատկությամբ և հին ու ժամանակակից կյանքի հակառագությամբ:—Կարլը ներկա դարու գաղափարներին հակառագություն է հին դարերի դյուցազներն ու հերոսները:—Պրոմեթեոս, Հերակլես, Մեծն Աղեքսանդր, Հաննիբալ, Սկիպիոն, իսկ մեր նախկին տերտերն իր հայրերի արարքների գեմ բողոքելուց հետո՝ առանց տրամարանական անհրաժեշտության, սոսկ հետևելու ցանկությամբ՝ վոդեկոչում է հայոց հին աստվածներին և դյուցազներին: «Ո՛վ հայոց հին աստվածներ, ո՛վ Անահիտ, ո՛վ Վահագն, ո՛վ Հայկ, ուուք փրկեցե՛ք մեզ»:

Քիթաբ-Դավթիի ճառի ուշադիր վերլուծությունը վավերացնում է առաջին իսկ ընթերցումից ստացած այն անմիջական տպավորությունը, թե նրա ծավալի ընդարձակությունն արդյունք է տարբեր բառերով և արտահայտության ձեւերով սահմանափակ մտքերի ձավաղման, ուր արտացոլում են ընդհանրապես ընդվզումներ, առողջ բանականությունն ու կյանքը կաշկանդող բոլոր հասկացողությունների գեմ: Բայց վոր ավելի ուշադրության արժանի յե՝ այդ մտքերի մեջ կան այնպիսիները, վորոնք ձեւակերպված են Կարլի վորոշ արտահայտությունների որինակով:—Կարլը զզիում է այդ թուղթ մրոտող դարուց, Սարհատն անիծում է մեր սիրու մրոտող մամուլը: Անտարակույս նա ակնարկում է պահպանողական մամուլը, առաջին հերթին, իհարկե, «Մեղու Հայաստանի» թերթը: Կարլը բողոքում է, թե՝ «Այլանդակ որենքներով կաշկանդում են առողջ բնությունը», Սարհատը բողոքում է զրի և դպրության դեմ: «Դուք չունիք մեզ այն, ինչ վոր պահնջում ե կյանքը և իրական աշխարհը: Դուք լցրիք մեր զլուխը ունայն վերացական ցնորդներով»: Կարլը բողոքում է «Պահան-

ջում Են, վոր մարմինս կապերով պրկեմ և կարմքս որենքներով կաշկանդեմ», իսկ Սարհատը բողոքում է՝ «Դուք ավելի պնդացրիք մեր ստրկության չղթաները և վարժեցրիք տանել բոնության ծանր ու անպատիլ լուծը»: Իսկ յեթե նա ի վերջո Կարլից բաժանվում է և նոր տարբեր և մտցնում իր հառի մեջ՝ փառաբանելով այն զրիները, վորոնք նոր վոգի յեն ներշնչում հայ ժողովրդին և նորոգում են նրա սպառված ուժերը և այն, և այն, ապա Բաֆիին այդպիսով իր որերի բորբռված կրքերին ե բավարարություն տալիս, պրոպագանդ և մղում հոգուտ իր գաղափարակից ընկերներին, մշակականերին, առաջին հերթին, անշուշտ Գրիգոր Արծրունուն:

## Զ.

Այս հառասացությունների պահուն, մինչ Սարհատը մոայլ մտքերով եր տարված, Մստոն, առանց ներկաների կողմից նկատվելու, զիշերով հեռանում ենք, վոր նա գնում է Ասլին վորոնելու և, իբր Սուլեյման-փաշայի կողմից առաքված նամակաբեր, ուղղակի գիմում և Զալալեղպինի բանակը: Զալալեղպինի և նրա մարդուց վստահությունը շահելու այս միջոցը Մստոն յուրացնում է Աղասուց հետևյալ ձեւափոխությամբ:

Աղասին Անիից զնում է ոռոսաց բանակը, ներկայանում է գեներալ Մաղաթովին և նրան զգուշացնում է թշնամու հարձակումից: Աղասու հետեղողությամբ, ուղղական կարեոր կարգադրությունների համար՝ Սուլեյման-փաշայի կողմից մի սուրհանդակ և դիմում դեպի Զալալեղպինի բանակը: Մստոն ճանապարհին սպանում է սրան, առնում և ձին և ամենականուրը՝ պաշտոնական նամակը և այսպիսով՝ իբր իսկական Աղասի մտնում է շեյխի բանակը: Յերբ Աղասին մտնում է ոռոսաց բանակը: «Հանկարծ զշղրան ընկամվ զորաց մեծը, կարառու ձեն տվին... Բայց քրիստոյան, արմյան, զոռալով... մեկ աժդահա... Մաղաթովի չատիրը տեսավ ու ձեռն եղի զամշին տվից...»: Իսկ յերբ Մստոն մտավ Շեյխի բանակը: «Ի՞նչ մարդ ես, — հարցրեց նրանից բանակի պահնորդներից մեկը: — Սուլհանդակ, — պատասխանեց նամակաբերը և համարձակ քչեց իր ձին գեպի շեյխի վրանը»:

Յերեք որ հետո Մստոն վերապառնում է, և ԺԱ. գլխում Սարհատին հայտնում է, վոր Ասլին գտնվում է Զալալեղպինի բանակում: Նա նկարագրում է իր այս ճամբորդական արկածները,

ընդունելությունը շեյխի բանակում և Ասլին աղատելու մանրամասն պարագաները:

Սարհատի այս խօսակցությունը Մատոյի հետ տեղի յի ունենում խմբից անջատ, մինչ այդ՝ «Նրա ընկերները պատկած էյին ավելի հեռու, խոտերի վրա, գիշերային արշավանքից հանդսանալու համար: Սարհատը մոտեցավ նրանց, զարթեցրեց և հազորդելով Մատոյի բերած լուրերը՝ հայտնեց, թե ինքը պետք և գնա դեպի Զալալեզդինի բանակը:— Մենք քեզանից չենք բաժանվի, —պատասխանեցին ընկերները»:

Մատոն թողեց Սարհատին և ընկերներին թաղեվոս առաջամակ վանքում և գիշեր ժամանակ, զաղտնաբար հեռացավ. այժմ յերեք որ հետո, նրանց գտնում ե մի ամայի գաշտում իրը մի ժամանակավայրում, առանց դժվարության: Բայց չե՞ վոր ծԱ. գլիւթ առաջին խոկ տողերով պարզվում ե, վոր խօմքը մի գիշեր վանքում մնալուց հետո, առավոտյան հեռանում ե. պարզ ե, վոր Մատոն պիտի կորոնցներ նրանց հետքը, և այս ի՞նչ «գիշերային արշավանք» ե, վորի մասին խոսվում ե առանց հիմնավորման, վերջապես ինչո՞ւ Մատոն նրանց գտնում ե ամայի վայրում և մանավանդ մինչ խումբը «գիշերային արշավանքից հանդսուանալու համար» պառկած եր խոսերի վրա:

Այս հարցերն իբրենց լուսաբանությունը պիտի պանեն, յերբ Սարհատի խմբի ներկա հանգստյան պատկերը համեմատենք Կարդի խմբի հետեւյալ յերկու հանգստյան տեսաբանների հետ:— Նման տեսաբան առաջին անդամ ներկայանում ե. «Դանուբի յեղերը. ավազակները մի բլրի վրա, ծառերի տակ բանակած»՝ մահու չափ հողնած են, վորովհետեւ բոհեմյան կոփը նոր են վերջացրել: Ահա գալիս ե կուսինսկին և պատմում ե, վոր իր նշանածին բոնությամբ պահած են պայտառում և վոր ինքն ուղարկում ե ավազակապետի խմբին միանալ, այդ անարգանքի վրեժը լուծելու համար: Այս պատմության տպավորության տակ ավազակապետը զամուստ ե գեպի իր խումբը. Հառավ՝ պատրաստվեց՝ Քալազակներ՝ գեպի օ՞ւր... Շվայցեր. — Դժոխիք ել վոր գնաս, յես քեզ հետ եմ»:

Յերկրորդ տեսաբանը պարզվում ե Կարլի հայրենիքում:— Յերկամոր ճանապարհորդությունից հետո «գիշեր ե, ավազակները խումբ-խումբ գեանի վրա տարածված են...»:

Ծվարց. — Բունը կապարի պես ծանրացել ե մեր վրա, յերեք գիշեր ե, վոր չենք քնել:

Ավազակներ. — Գիշեր բարի, զնդապետ (պառկուասմ են գեա-

նի վրա և քնում), խորին լոռություն: Կարլը սակայն մոայլ մաքերով և պաշարված: Իսկ յերբ տեսնում ե Հերմանին, ապա հորը և լոսւմ նրանց պատմությունները՝ դառնում ե դեպի խռմբը:—

Բավ ե, վեր կացեք... զարթեցէք, չե՞ք ուզում...

Ավազակներ. — ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել...

Շվայցեր. — Հրամայեցե՛ք, զնդապետ, ի՞նչ պիտի անենք:

Յեկ խումբն ուղևորվում ե վոճարագործին պատժելու:

Այժմ պարզվում ե, վոր Կարլի խմբի հանգստյան այս յերկու տեսաբանից Սարհատի խմբի հօմար մի նման վիճակ կառուցելու դժվարությունից են առաջացել վերիկ հակասությունները:— Սարհատի խմբի վանքից հեռանալը հիշատակված ե, վորպեսպի մի կերպ պաշտպանվի «գիշերային արշավանքի» զաղափարը և այդպիսով հիմնավորվի ավազակային խմբի հանգստյան պատկերը, ձիշտ այնպես, ինչպես Կարլի խմբի հանգստյան պահը Դամուկի յեղերքին հիմնավորված ե բոհեմյան կոփիների պատճառած հոգնածությամբ: Մատոն գտնում ե Սարհատին առայլ վայրում, վորովհետեւ նման վայրում կուսինսկին և Հերմանը գտնում են Կարլին և խմբին, և Մատոն պետք եր վոր առանձին գնար Զալալեզդինի բանակը, վորպեսպի ավելի ճշշտ կերպով կատարեր Կուսինսկու գերը, պատմելով հափշտակված նշանածի բնակավայրի մասին և առաջարկելով նրա փրկության միջոցները: Պետք եր, վոր խումբը քնած լիներ և միայն Սարհատն արթուն, վորպեսպի ինչպես Կարլը նրանց արթնցներ և հայտներ իր մտադրությունը, և խումբն ել, Կարլի խմբի նման, հայտնաբերել իր անվակերպահ պատրաստակամությունը:

Բայց Մատոյի մեկնումը գեպի Զալալեզդինի բանակը, այնտեղից վերաբարձը, կրկին հանդիպամը Սարհատին, այս բոլորը գիշերային հանգստյան պատկերն ստեղծելուց բացի, մի այլ հիմնավոր նպատակ են հետապնդում— ձգտում են վորեւ ձեռլ վեպը հատցնել իր վախճանին:

«Ավազակներ»-ի մեջ, Ֆրանցի սպանությունից ե Կարլի ինքնության հրապարակ գալուց հետո, մինչ մի վայրկյան չարփին անհետացած և գրաման իր բախտավոր լուծումն ստացած և թվում, հանկարծ գլուխ են բարձրացնում հերոսի տարբեր պարտականությունները գեպի նշանածը և գեպի հետեւրդ ավազակները, և իրենց հակամարդ սեժի տակ չքացնությունը: Իսկ «Զալալեզդին»-ի մեջ, Մատոյի բերած տեղեկությունների հիման վրա, մի դլխում Սարհատն իր խմբով մեկ-

նում և Զալալեզինի բանակը՝ Ասլիին ազատելու դիտումով, բայց բանակից վոչ հեռու մի ձորում ականատես լինելով հայ կանանց անպատճության մի տեսաբանի, մուանում և իր նպատակը, կորունցնում և խմբագետական հավասարակշությունը։ Հակասակ Դալի-Բաբայի զգուշացումներին՝ քրդերի գերազանց ուժի վրա հարձակվելու հրաման և տալիս և այդ անհայտասար կովի մեջ վուշնչանում և իր խմբի հետ միասին։

Այսպիսով, սակայն, վեպը բաժանվում է գրամայից, և ինքնուրույն վերջավորության և հանգում, մի յերեսույթ, վորն արժանի յել լուրջ ուշադրության։

Վեպի սկզբնական մասում Մստոյին վեճակվեց կատարել ծերունի Դանիելի գերը, բայց հետագայում նա գարձավ համեմատաբար ինքնուրույն և հանդիսացավ գործողության կարևոր լծակներից մինք։—Նա՛ առաջնորդեց խումբը դեպի Սախկալ-Դուդանի կիրճը, այստեղից՝ Բաբրուղիմեռու առաքյալի վանքի վրայով, դեպի վերջնական կոփիք՝ հերսոի կործանումը։

Մստոն իրավունք չունի հպարտանալու, թե միշտ տրամաբանությամբ և կատարել իր պարտականությունները, և կամ իր ժիջոցով կատարված գործերը տրամաբանության արդյունք են։ Մենք ակնարկեցինք այն հակասության մասին, վոր առաջանում ե, յերբ նա գիշեր ժամանակ վանքից գաղտնաբար հեռանում և և յերեք որ հետո վերստին հանդիպում և խմբին՝ ամայի գաշտում։ Այս հանդիպման պահուն նա հպարտանում է, վոր Ասլին շեյսի բանակից դուրս բերելու և Սարհատին հանձնելու համար՝ բոլոր խոչընդոտները նախատեսել և չեղոքացրել ե, և մենք հավատում ենք նրա հնարամտության։ Բայց քանի վոր այդ կարողություններն ունի նա, ինչո՞ւ հենց ի՞նքն Ասլիին իր հետը չբերեց՝ հանձնելու Սարհատին։ չե՞ վոր այս մասին վորեւե գըժվարության նշույն անդամ չի նկատվում։ Հետեագես իր համբավոր հնարամտության՝ անհամապատասխան անմտություն և գործում նա, յերբ կրկին վերադառնում է, Ասլին աղատելու համար բոլոր գյուրությունները հայոնում Սարհատին և ամբողջ խումբը չարժման մեջ դնում։ անմտություն և գործում և խումբը անշուշտ, յերբ հետեւում ե նրա ցուցմունքներին։

Ի վերջո պարզվում է, վոր այս տարորինակություններն անհրաժեշտ են, վորպեսզի Սարհատն իր խմբով Զալալեզինի բանակը դնալու առիթն ունենա, հայ կանանց պատիվը փրկելու համար կովի բոնվի քրդերի հետ, և այդ կովում վերջ տա իր

առաքելության։ Բայց համապատասխանո՞ւմ է, արդյոք, հերոսի կյանքի այս վախճանը նրա սկզբնավորության։

Կարլ Մոորի վախճանը տրամաբանական և հոգեբանական հետեւանքն և սկզբից ի վեր ստեղծված պայքարին։ Նա գուրս յեկավիր անձին սպանացող չարության դեմ, և այդ պայքարին նվիրվելու համար՝ քանից հանդիսավոր ուխտ կնքեց այն մարդկանց հետ, վորոնց դարձրեց իրեն գործակից և հասարակության՝ անպիտ անդամներ։ Իսկ այժմ, յերբ այդ չաղթահարել և յերբ կուղե անձնատուր լինել կյանքի վայելքներին՝ լքելով իր գործակիցներին, ահա ծառանում են վերջիններս նրա դեմ իրենց իրավացի պահանջներով։ «Մենք քեզ գնել ենք մեր սրտերի արյունով, ոու մերն ես հոգով ու մարմնով... և այժմ ուղղում ես թողնել մեզ մի ինչ վոր լացող աղջկա պատճառով... Տար մեզ հառաջ»։ Կարլը վոչ կարող և թողնել լացող աղջկան և վոչ ել ավաղակներին, յերկու կողմներն ել հավասար իրավունքներ ունին նրա վրա։ Ստեղծված գերազանց գրամատիկական վայրկյանը թելադրում և խզել բոլոր պարտականությունների կապերը և դոհել նույնիսկ իր անձը։ Այս կարլ Մոորն է։

— Իսկ Սարհա՞տը։

Պիտի պահանջնենք, վոր նրա վախճանը նույնպես լինի տրամաբանական և հոգեբանական հետեւանքն այն պայքարի, վորի մեջ նա մտավ։ Այդ պայքարն սկզբում ուներ անձնական մտակիներ, ապագային, ինչպես ուղղում և հավաստիացնել վեպը, ընդլայնվեց և ստացավ լայն հասարակական բնույթ, վորի պատճառով նա թողեց հայրենական տունը, թափառեց զանազան վայրեր և ընդհարումներ ունեցավ քուրդ ցեղագետների հետ։ Բայց վեպի գործողության առանցքն այդ պայքարը չե այլևս, այլ՝ սոսկ մի անհատական զգացում—սերը։ Նա գուրս յեկավ Տիգրանակերտից միայն և միայն իր նշանածին փնտուելու, և այն գործողությունները—Սախկալ-Դուդանի կովի, Բարդուղիմեռու առաքյալի վանքի գեղերերը, «գիշերային արշավանք» և այլն, վոր կատարվեցին այս յերկար ճանապարհի վրա, պատահական գեղերեր են, վորոնք կարող ելին բնավ տեղի չունենալ և յեթե տեղի յեն ունեցել, պարզապես Կարլին կամ Աղասիին նման յերեվալու ցանկության պատճառով է։

Նրա հիմնական նպատակից գուրս ընկած այդպիսի մի պատհական դեպքով լուծում և ստանում և՛ վեպի գործողությունը։ Զալալեզինի բանակի մոտ, հաղիլ մի քանի քայլ Ասլիից

հեռու, ուրեմն, նա ուզում է հայ կանանց նախատինքի վրեժը լուծել քրդերից և հրամայում է —

«Պետք է վրա տալ»:

Դալի-Բաբան շատ իրավացիորեն նկատում է այդ քայլի անմտությունը — «Շատ են անիծվածները» :

Սարհատի համար նշանակություն չունի վրեւե զուտչացում — «Մինույն ե, յեթե մեզ պետք եր մի որ մեռնել, լավ է, վոր այստեղ լիներ» : Բայց ինչո՞ւ անպատճառ այստեղ . մի՞թե տեսարանը այնքան անտանելի յե, վոր սախում են նրան մահը գերազանել կյանքից . սա պատրիակ է, նա տեսավ վոչ պակաս սոսկալի տեսարաններ . — այրվող դրուզեր, հրո ճարակ ժողովուրու, սարսափահար արյունվագ ընտանքից, ցից հանված ծերունիներ, նույն վիճակին յենթարկված մահամերձ հայր և այս բոլորի հանդեպ արհամարհական անտարերություն — «Ինձ քաշեց դեպի հայրենիքը մի սիրտ, վորը սիրում եր ինձ, յես յեկա նրան ազատելու . . .» : Սարհատի ներկա դիտավորության անհետեղողականությունը զարմացնում է և Դալի-Բաբային՝ «Բայց զու կը կորցնես Ասլիին, վորի համար յեկել ես» . Սարհատն իր դիտավորությունից հետ չի կենում . «Յեթե մեղ պետք եր մեռնել՝ լավ եր, վոր այստեղ լիներ», այլ խոսքով նա ուզում է անպատճառ մեռնել : Բայց ինչո՞ւ այդ անիմաստ ինքնասպանությունը . — Սարհատն ուրիշ ճամբար չունի այլեւ, նա պետք է մեռնի և հատկապես այս ձեռվ, ահա թե ինչո՞ւ . . .

ԵԵՆթագրենք Մստոն Ասլիին հետն առած վերադառնար Սարհատի մոտ, և կամ Սարհատը Մստոյի ստեղծած գյուրությունների չնորհիվ, տուանց կովի բանվելու քրդերի հետ, ազատեր իր նշանածին և այդպիսով լուծվելին բոլոր խնդիրները — Ասլիի համար եր նրա առաքելությունը, Ասլիին ազատեց, հետեւապես ամեն ինչ վերջացավ :

Բայց մի՞թե այսպիսի մի լուծում չի առաջնորդում մեղ դեպի Կարլ Մոորի դրամատիկական վախճանը, —ի՞նչ պիտի լինի ընկերների ճակատապիրը, վորոնք նրան զնել են նույնութեա իրենց սրտի արյունով, չպի՞տի բողոքեն . «Այժմ ուզում ես թողնել մեղ մի ինչ վոր լացող աղջկա պատճառո՞վ», չպիտի պահանջեն, «Տար մեղ հառաջ» : Այս դեպքում յերկու ճանապարհ պիտի բացվեր Սարհատի առջև — կամ իրը իսկական Կարլ Մոոր խզել բոլոր պարտականությունները, զոհելով և՛ Ասլիին, և՛ իր անձը, և կամ ուանել նրանց հառաջ : Առաջին դեպքում անփառունակ, անհրա-

պուլը վախճան կունենար մի կյանք, վորն ամենից առաջ հեղափոխական, սերունդների առաջնորդ հանդիսանալու հավակնություններ ուներ, իսկ յերկրորդ դեպքում այդ կյանքն իբր մի ծանր բեռ պիտի տաղտկացներ հերոսին, վորովհետեւ կարլ Մոորն ընդմիշտ կանգ է առել, ուրեմն միայն սեփական ուժերով մինչեւ ո՞ւր գնալ, մանալանդ այժմ, յերբ նա վոչ միայն ավազակապես, այլև ընտանեպետ է : Վո՞չ, պետք է խուսափի այն բոլոր ճանապարհներից, վորոնք վորեկ ձեռվ մոտեցնում են նրան Կարլի վախճանին : Բայց կարող եր այդ կոխվը հայ կանանց պատվի փոխարեն՝ Ասլին աղատերու համար տեղի ունենալ, հակառակ Մստոյի կարգադրություններին վորեկ չնախատեսված մի գեղագիտական գործությունը : Այսպիսով Մստոյի ուղերությունը և նրա հետ կարգած իրադարձությունները կարող են կորոնցնել իրենց արժեքը և վոր գլխավորն է, նման մասնավոր շարժառիթներ կը նսեմացնեն հերոսի վախճանին ցանկալի լայն հատարակական բնույթը : — Վո՞չ, պետք է ձեւանալ անդեռ և ամենեկին չմտահողվել գործողությունների տրամաբանական պատճառաբանությամբ, և վերջացնել հերոսի կյանքը մի ժեմտով, վոր լինի հասարակական, հերոսական, հետեւապես արժանի նրա հավակնություններին, թեղեւու վեպի ընդհանուր կառուցվածքի տեսակետով՝ անիմաստ :

## Է

Այժմ մեղ մնում է ցույց տալ, վոր Կարլի արարքներն առհասարակ աղջայնական գաղափարախոսությամբ գունավորելը, նույն գաղափարախոսության տարբեր, ինքնուրուցյան յերկուցյան ինչպես և նրա մի այլ արտահայտության՝ վեպի «Զալալեղդին» անունը և այն, և այն, գեղարվեստական վրիպումներ են, չեն ձուլվում Կարլից սերված գործողության հետ :

Ինչպես անսանք, Կարլի անցյալը Սարհատին է հատկացվում, սա ևս արտաքսվում է հայրենական տնից և շրջապատող համայնքից : Բայց այս դեպքերը բացատրվում են իրը հետեւանք նրա ուրույն գաղափարախոսության, այլ պատճառով և դառնում են անհավատիլ : Իսկ յերբ նույն Կարլի հետևողությամբ Սարհատը վերադառնում է հայրենիք և այս առթիվ նույն գաղափարախոսության թելադրությամբ կատարվում են ուրույն դեպքեր, գործողությունը նետվում է միանդամայն մանկական անհեթեթյունների գերելը : Այս մասին վեպի է գլուխը հետեւայն և հաղորդում մեղ . . .

Սարհատն էր խմբի հետ Դիալրեքիրի կողմերն եւ լինում, յերբ լսում եւ քրդերի շարժման մասին, նաև իսկույն յուրայիններով շտապում եւ դեպի Աղքակա կողմերը, — ինչո՞ւ: — Յերկու ցանկությունն նրանց քաշում են դեպի հայրենիքը, «վորին վաղուց մոռացել եր»: Նախ՝ Աղքակը քրդերի արշավանքի գծի վրա գտնելիք, ավելի պետք եւ յենթարկվեր նրանց ասպատակություններին, մտածում եր իր հայրենակեցներին ողնության ձեռք հասցել: Յերկորդ՝ «վոր ավելի գլխավորն եր, այնտեղ կար մեկը, վորին նվիրված եր իր բոլոր սրտով»: Ապա շարունակում եւ պատմել, թե Դիալրեքիրից վերադարձին, դեռ Աղքակ չհասած՝ նա ընկերներին այնտեղ թողեց, վորպեսզի տեղական բնակչության ողնություն հասցնեն, իսկ ինքն ուղեռովեցավ դեպի վան: Այնտեղ ներկայացավ փաշային, խնդրեց թույլտվություն տեղական բնակիչներից կազմելու մի գունդ՝ յերկիրը քրդերի և բարձրողությունների ասպատակություններից պաշտպանելու համար: Յեկ ահա Վանից ձեռնունայն վերադարձին եւ, վոր նաև առաջին անդամ մեղ հանդիպեց Խոչարա ձորում: Վեպը շարունակում եւ թեպետև այնտեղ նա տիսուր և հուսահատ եր, այնուամենայի նրա յեռանդը չեր թուլացել, նա դիմեց դարձյալ քահանաների, վարդապետների, տանուտերների, վորպեսզի զինեն ժողովրդին դալիք վտանգին դիմագրավելու համար, վորովհետեւ իբր թե Զալալեղդինն իր արշավանքը դեռ չեր սկսել: Բայց այդ մարդիկ նրան «հիմարի և խելագարի տեղ եյին դնում» և այլ կադմակերպությունը դլուխ չի դալիս:

Վո՞րքան համապատասխանում են այս տեղեկությունները վեպի կառուցվածքին: —

Յեթե, արդարեւ, Սարհատի ճամբորդության «ավելի գըլխավոր» նպատակը լիներ Ասլիի աղատադրումը, ապա Տիգրանակերտից վերադարձին նախ և առաջ պետք եր նրան հեռացներ գալիք փտանդի կենտրոնից, մանալանդ, յերբ ամեն ինչ դեռ խաղաղ եր և ժողովուրդը տեղահան յեղած չեր, բայց մենք ի՞նչ ենք տեսնում — նա Ասլիով բնավ չի հետաքրքրվում, ուղեռվում ե վան, վերադարձին ել զբաղվում ե ազգաբնակչությունը վոտի հանելու ծրագրով, մինչ այդ կոտորածն սկսվում ե, և նրան այլևս բոլորովին կորսնցնում ե անսողությունից:

Պարզ ե, Սարհատի դիտավորությունն ու գործերը միմյանց հակասում են:

Բայց կա դեռ ավելի մեծ հակասությունը: —

Սարհատը մեղ հանդիպեց Խոչարա ձորից գուլս գալիս, յերբ

այլպատմ եյին շրջակա հայկական գյուղերը, և մարդիկ թաղվում եյին հրդեհի մեջ, յերբ նա զիտում եր այս բոլորը, այլև արյունվա ընտանիքի թշվառությունը և այնուամենայի մնում եր անտարբեր: Նրա այսպիսի վերաբերմունքը, ավելի ես խորհրդավոր ուղևորությունն սկզբում մեղ զարմացրեց, բայց քիչ վերջը ամնն ինչպիս համոզիչ, ահա թե ինչպես: «Նա չեկավ հայրենիքը փրկելու համար... նա յեկավ փրկելու մի գեղեցիկ արարած, վորին միայն սիրում եր, և վորը միայն եր ամբողջ աշխարհի մեջ, վոր սիրում եր այն մարդուն, վորին բոլորն առում եյին, այլ եր նրա միթթարությունը: Բոլոր աշխարհի մեջ հանգստությունն, դադար և իր գլուխը զնելու մի անկյուն չունեցող անբախտը՝ ուներ մի կնոջ ջերմ սիրա, ուր ապրում եր նա, չնչում եր և այնտեղ մոռանում եր իր կյանքի գառնությունները, թեև տաս տարուց ավելի յեր, վոր չեր տեսել նրան»: Պարզ ե, Սարհատը շրջակա գեալքերի նկատմամբ մի պարզ անցորդ է, հեռի վորեւ գաղափարական գիտողությունից: Նրա ամբողջ եյտթյունը, ինչպես և կարլինն այս դեպքում, նվիրված ե միմիայն իր նշանածին: Հետեւապես է հատվածում այդ ճամբորդության նպատակների մեջ «ավելի գլխավորը» Ասլին համարելը՝ համապատասխանում ե հերոսի խակական նպատակին, վորով վեպի սահմաններից դուրս ընկած ուղույն գաղափարական գործունեյությունը դառնում ե թյուրիմացություն վոչ միայն հենց այդ արտահայտության, այլև հերոսի նպատակների խակական բնույթի տեսակետով:

Բայց ի՞նչո՞ւ Սարհատն ուղում ե հանդես գալ իբր հասարակական գործիչ: Այդ վեպի հիմնական գաղափարախոսությունն ե, վորի հետ մենք պետք ե հաշտվինք, առանց վորեւ նախապայմանի, և նա ուղում ե այդ գաղափարախոսությունը մարմարվորել, նյութ ունենալով կարլի գործունեյությունը, այլապես պիտի հյուսվեր այլ գործողություններով մի վեպ, տարբեր ներկա «Զալալեղդին»-ից: Հետեւապես յեթե է. հատվածում վեպի սահմաններից դուրս կատարված վեպքերը հիշտակեր առանց սիրո մոտիվին, բոլորովին կը ժիտեր վեպի բուռ գործողության եյտթյունը և Վանից վերադառնալիս վերջացած պիտի համարեր իր առաքելությունը, իսկ յեթե սիրո մոտիվին արտահայտությամբ միայն նախապատվություն տալուց անցներ գործնական քայլերի, պարտավորված պիտի առներ իր նշանածն ու քաշվեր հեռուները, վորով ինքնին կը լուծվեր վեպի հանգույցը: Բայց նա

կարող եր վեպի գործողության սկզբին, Խոշաբա ձորից դուրս գալիս, ուրեմն, սիրո մոտիվի հետ հանդես դար և հասարակական գործիքի հանգամանքով:—Այս գեղքում ըլջակա թշվառությունը տեսնելով՝ նա պարտավոր եր միանալ խմբին, մանավանդ վոր այսուղ միանալու շատ ավելի մեծ պահանջ կար, քան Սափոկալ-Դուղան կիրճում: չե՞ վոր անհրաժեշտ եր «Հարկավորված ողությունը մատուցանել տեղային բնակիչներին»: Նույն ոգնության պահանջը պիտի զգացվեր, յեթե հենց գործողության սկզբից խմբի հետ հանդես դար: Յերկու գեղքերումն ել խնդիրը կր բարդար, յեթե Կարլից տարբեր ուղիներ ընտրեր, այդ վեր կը լիներ իր ուժերից, իսկ յեթե նրա հետեղությամբ ապագային կատարվելիք գործերն այժմ կատարեր՝ վաղաժամ կը լիներ, —ուր կմնար իր կենապրականը՝ հայրենական տուն, մահամերձ հայր, ծառա և այլ այսպիսի պարագաներ, —վո՞չ, այսպիսով վեպի բովանդակությունը կիսով չափ կը լրացներ: Սարհատն անշուշտ մտածել և, —քանի վոր իմ կոչումն ե հետապնդել վորոշ քաղաքական նպատակներ, ապա ավելի հարմար և հրապարակ գալ նախ՝ Կարլի հետեղությամբ և նրա նպատակներով, թեհոմայից մինչև Ֆրանկոնիա ճամբան Ամալիայի համար՝ անվանել Տիգրանակերտից մինչև Աղքակ՝ Ասլիլ համար, իսկ Կարլից տարբեր յերեսությանալու համար՝ հանդես գալ խմբից անջատ և հաջորդիվ նրա հետ միանալու առթիվ՝ այդ բաժանման վերադրել աղքային հեղափոխական նպատակներ, իսկ առաջացած ներքին հակառական համար պետք և ձեւանալ միամիտ և «ավելի գլխավոր» մի արտահայտությամբ ամեն ինչ հարթված համարել:

Բայց ավելորդ և զայրանալ հերոսի վրա, նա այսպիսի դորձեր ամենեին չի կատարել, չեղինակը պարզապես նրան դրաբառում է:

### Ահա թե ինչպես:—

Վեպի Ա. հատվածում Զալալեղդինի բանակի նկարագրությունը վերջանում է հետեւյալ խոսքերով: «Այսպես սկսավ շեյխ Զալալեղդինի արշավանքը դեպի տաճկական հայաստանը», իսկ հաջորդ Բ. հատվածն սկսվում է այսպես: «Անցալ մի ամբողջ շարաթ, մի տղամարդ գալիս եր Վանից դեպի Աղքակ բերող ճանապարհով» և շարունակում են նկարագրել Զալալեղդինի արշավանքի հետքերն այդ տղամարդու ճամբու վրա: Յեթե արդարեւ այդպես և, ուրեմն նա Վանից վերադառնալիս է. հատվածում յե՞րբ ժամանակ ունեցավ իր խրատներով ու խորհուրդներով դե-

մելու Աղքակա հայ մեծամեծներին: Այս Հակասությունից դուրս գալու համար, դուցե, նույն Բ. հատվածում պատմվում է՝ թե Սարհատը Խոշաբա ձորից դուրս գալիս, յերբ հայերին հասած գժրախտությունները տեսնում ե՝ շատ և զարմանում, վորովհետև տասն որ առաջ, յերբ նույն տեղից անցնում եր, ամեն ինչ խաղաղ եր և յերջանիկ, —ուրեմն նա ահա այս տասն որվա ընթացքին պետք է դիմած լինի հայ մեծամեծներին՝ ողնության գնդեր կաղմելու համար: Բայց չե՞ վոր է. հատվածում ասաց, թե Տիգրանակերակից վերադարձին՝ Աղքակ չհասած՝ իր խումբն այսուհեղ թողեց և ինքը գնաց Վան, Վանից վերադարձին՝ մեզ հայտնվեց Խոշաբա ձորում, իսկ այստեղից՝ արգեն ականատես յեղավ բաշիրովուների հետքերին: — վո՞րտեղից ուրեմն այլ տասն որվա ժամանակամիջոցը: —Պարզ է, այդ տասն որը գործություն չունի: Է. հատվածում հերօսին վերագրված գործողությունները չեն պարփակվում ավլյալ ժամանակի և տարածության մեջ, վորովն ըրանք ամենեին կատարված չեն:

Գործողության ամբողջության տեսակետով թյուրիմացություն ե նույնպես վեպի «Զալալեղդին» անունը: Նա համապատասխանում է միայն Ա. հատվածում Նկարագրված համանուն հերոսի արշավանքի պատրաստության, ինչպես և Բ. հատվածում Ոմար աղայի և Յեղիկազար վարդապետի խորհրդակցության՝ այդ արշավանքին դիմադրելու համար: Բայց չի համապատասխանում տասն հատվածների մեջ հանգամանորեն ներկայացված Սարհատի գործունեյության: Վեպի գլխավոր հերոսը, այսպիսով, Սարհատն է, Զալալեղդինն իր բանակով և Բ. հատվածի հարակից պարագաներով թերեւ ծառայեն իբր Փոն միայն, վորի վրա թանձր զույնով նկարվի Սարհատի պատկերը: Հետեւպես, յեթե վեպը պետք է գլխավոր հերօսի անունով կոչվի: ապա այդ անունը «Սարհատ» պետք է լինի:


Բայց գործողության կառուցվածքի տեսակետից Զալալեղդինն իր հրոսակներով վոչ միայն յերկրորդական՝ այլև ավելորդ է:

Թուս-տաճկական պատերազմն արդեն շարժման մեջ և դրել համարյա բոլոր մահմետական ցեղերին: Զալալեղդինյան ախորժակով և գործունեյությամբ: Հետեւպես առանց Ա. և Բ. հատվածների մասնավոր միջամտության Սարհատի գործունեյության համար արդեն գոյություն ունի պատրասի Փոն, այդ պատճառով յեթե հիշյալ յերկու հատվածները բոլորովին անջատվեն վեպից, գործողությունը վոչ թե կորուստ, ընդհակառակը, կունենա առաջելություն: — կստանա պահանջված սեղմ աբողջությունը:

Սակայն վեպի ընդհանուր տեսնղենցի համար անհրաժշտ ե արայումարբու չելիքին և նրա ավագակաբարո հետևորդների պատկերցումը, անհրաժեշտ ե Ոմար աղայի և Յեղիազար վարդապետի հայտնությանը. այս բոլորը 1878 թ. ռուս-տաճկական պատերազմի շրջանում անբաժան երեսույթներ են հայ իրականության. և կոչված են այսաեղ հարստացնելու Սահրատի գործունեյության տեղական բովանդակությունը։ Անհրաժեշտ է նույնպես առաջ քաշել քուրդ ցեղապետին և նրան նվիրել վեպի անունը. վորակեղի սոսկ անվան շլաշնող գույնով ամբողջ յերեսույթները պատկերացնելու պատրանքի տակ պահպինք. այս բոլորն անհրաժեշտ են իրք ժամանակի. և միջավայրի արտահայտություն, բայց նրանք չմիացան այնուամենայնիվ Սարհատի գործունեյության հիմնական կառուցվածքի հետ. իսկ այդ կառուցվածքը փոխ եր առնված «Ավագակներ»-ից։

Այսպիսով ուրեմն, ինչպես կարլի գործունեյությունն հայ պահապահ կաղաքական գաղափարախոսությամբ գունավորելը, նույնպես և նրան ժամանակին միջավայրի յերեսույթների հետ ձուլելը հանդիպացան ձախողանքներ միայն, վորոնք զրկեցին վեպը ինչպես տրամաբանական, նույնպես և գեղարվեստական անհրաժեշտ ամբողջությունից։





ԳԻՆԸ 60 ԿՈՊ. (3½ մ.)



С. МАНУКЯН

ПРОИСХОЖДЕНИЕ ДЖАЛАЛЕДИНА

Госиздат ССР Армении  
Эривань—1982

ՀՀ Ազգային գրադարան



NL0380662

71-441